



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

АРХЕОЛОГИЧЕСКИЕ
ПАМЯТНИКИ
АРМЕНИИ

5

СРЕДНЕВЕКОВЫЕ
ПАМЯТНИКИ

ВЫПУСК
I

А. А. КАЛАНТАРЯН

МАТЕРИАЛЬНАЯ КУЛЬТУРА
ДВИНА
IV-VIII вв.

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1970

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Հ Ա Յ Ա Ա Տ Ա Ղ Ի
Հ Ղ Ա Գ Ի Տ Ա Կ Ա Ղ
Հ Ս Ի Ը Ա Ր Չ Ա Ղ Ղ Ե Ր Ը

5

ՄԻՋՆԱԿԱՐՅԱՆ,
ՀՍԻԸԱՐՉՈՒՂԵՐ

Պ Ր Ա Կ

I

Ա. Ա. ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

Գ Վ Ի Ղ Ի
ՆՅՈՒԹԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԸ
IV-VIII^{դդ.}

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1970

902 - 6 (C43)
14

Խմբագրական կազմակերպություն
Ր. Ն. ԱՌԱՔԵՆՅԱՆ, Ս. Գ. ԲԱՐՆՈՒԴԱՐՅԱՆ,
Կ. Գ. ՂԱՅԱԴԱՐՅԱՆ, Հ. Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ,
Գ. Ա. ՏԻՐԱՑՅԱՆ

Պրակտիկ խմբագիր
Ր. Ն. ԱՌԱՔԵՆՅԱՆ

THE ARCHAEOLOGICAL MONUMENTS
AND SPECIMENS OF ARMENIA

5

MATERIAL CULTURE OF DVIN
4th—8th CENTURIES

by A. A. KALANTARIAN

YEREVAN 1970


Ե Ր Կ Ո Ւ Խ Ո Ս Ք

Ներկա պրակը նվիրված է Հայաստանի միջնադարյան մայրաքաղաք Դվինի IV—VIII դդ. նյութական մշակույթի ուսումնասիրությանը: Աշխատանքը շարադրելիս, հատկապես հարտարապետական հուշարձանների պատմա-հնագիտական ֆնեության ժամանակ մեծ շփով օգտագործված են Կ. Ղաֆադարյանի, Վ. Հարությունյանի, Ն. Տոկարսկու հրատարակած մենագրությունները: Հնագիտական առումով ֆիչ ուսումնասիրված վաղ միջնադարյան ժամանակաշրջանին վերաբերող IV—VIII դդ. նյութերը գերազանցապես հրապարակվում են առաջին անգամ, ուստի հնարավոր են թերություններ և հետագա ստուգման կարոտ ժամանակագրական որոշ վրիպումներ: Դվինի հնագիտական առարկաների ֆնեության ժամանակ որպես բաղդատական նյութ օգտագործված են Հայաստանի տարբեր մասերում, ինչպես նաև Անդրկովկասի, Միջին Ասիայի, Մերձավոր Արևելքի հուշարձաններում հայտնաբերված ժամանակամերձ նյութերը:

Պրակին կցված են աղյուսակներ՝ իրենց ծանոթագրություններով և գրականության ցանկ: Հետագա ուսումնասիրողների աշխատանքը դյուրացնելու նպատակով ծանոթագրություններում հերթականությամբ տրված են իրերի և սոսրկանների համառոտ նկարագիրը, գտնելու վայրը, տեղամասը, ֆառակուսին, շերտի խորությունը, ինվենտար համարը, չափերը և թվագրությունը: Հնագիտական իրերի աղյուսակներում նշված են գրականությունը և գուգանեո նյութերի վերաբերյալ եղած ուսումնասիրությունները:

Պրակի նկարագարդման աշխատանքներին մասնակցել են ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ագագրության ինստիտուտի գեղանկարիչներ Ռ. Ղազարյանը, Ն. Խանգաղյանը, լուսանկարիչ Գր. Ժամկոչյանը և Դվինի արշավախմբի հարտարապետ Գր. Քոչոյանը:

Հ Ե Ղ Ի Ն Ա Կ



Ն Ե Ր Ա Մ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք, առևտրա-արհեստավորական և մշակութային խոշոր կենտրոն Դվինի ավերակները գտնվում են Երեւանից հարավ, մոտ 35 կմ հեռավորության վրա: Քաղաքը բռնել է մի հսկայական տարածություն, որի վրա այժմ տեղադրված են Արտաշատի շրջանի Այգեստան, Բզովան, Վերին Արտաշատ, Հողաբերդ և Հնարերդ գյուղերը՝ նրանց մեջ փոխված դաշտերով: Քաղաքը բաղկացած է եղել երեք մասից.

ա) Դվինի միջնաբերդը, որը տեղադրված է բլուրի վրա և շրջափակված պարսպով,

բ) քաղաքի թաղամասերը, որոնք իրենց հերթին առնված են ընդարձակ պարսպապատերի մեջ և

գ) քաղաքի արվարձանները, որոնք գտնվել են պարիսպներից դուրս:

Դվինի բլուրն իր շրջապատի համեմատությամբ ունի մոտ 30 մետր բարձրություն և Արարատյան դաշտի այդ հատվածի ամենաբարձր կետն է, ուստի միանգամայն բնական է, որ այն բնակեցված է եղել դեռևս վաղ ժամանակներից:

Դվինի միջնաբերդը շրջապատված է անառիկ պարսպով և շուրջ 40 կիսաբլուր աշտարակներով: Միջնաբերդն ունեցել է նաև ջրային պաշտպանություն գոտի (30—70 մ լայնությամբ), որի խրամատի հատվածները պահպանվել են բլուրի արևմտյան և հարավային մասերում: Միջնաբերդը քաղաքի թաղամասերի հետ կապված է եղել խրամատի վրայով գցված կամուրջներով: Նրանցից երկուսի հետքերը պարզորոշ նկատվում են տեղում,

մեկը՝ հարավային մասում, որը միջնաբերդը կապել է քաղաքի կենտրոնական թաղամասի հետ, որտեղ գտնվում էին մայր տաճարը, կաթողիկոսարանը և կրոնական այլ շենքեր, մյուսը՝ հարավային մասում է, որը եղել է երկթուղի:

Դվինի քաղաքային թաղամասերը փոխված են միջնաբերդի շուրջը: Ամենահին թաղամասը, որը ձևավորվել է IV—V դդ., գտնվում է բերդից հարավ-արևմուտք: Այստեղ տեղադրված են եկեղեցական կառույցները և նրանց հետ անմիջապես առնչություն ունեցող այլ շինություններ: Այդ թաղամասն ունեցել է իր պարիսպը և անջատված է եղել այլ թաղամասերից: Ըստ երևույթին, արհեստավորական թաղամասերը կենտրոնացված են եղել ներկայիս Վերին Արտաշատ, Այգեստան և Բզովան գյուղերի միջև, որտեղ երևան են եկել խեցեղենի թրծման հնոցներ և տարբեր տիպի նյութեր, նաև արտադրական խոտան:

Դվինի քաղաքային պարիսպները շատ վատ են պահպանվել: Ավերված վիճակում նշմարվում է հարավային պարիսպների մի մասը՝ Վերին Արտաշատ գյուղում, որը ձգվում է դեպի Բզովան գյուղի խաղողի այգիները: Հարավ-արևմտյան պարիսպների մի փոքր հատված նշմարվում է Այգեստան-Դվին խճուղու ձախ մասում:

Դվին քաղաքի հնագիտական ուսումնասիրությունն սկսվել է 1899 թվականին: Պեղումները կարճ ժամանակով կատարել է Նիկ. Մառը: 1904, 1907 և 1908 թվականներին Դվինում, հատկապես նրա կենտրոնական թաղամասում որոշակի աշխատանքներ է կատարել Խաչիկ վարդապետ Դադյանը: Նա բացել է կաթողիկե եկեղեցու պատերի ներքին երեսը, միանավ բազիլիկ եկեղեցին: Նրա գտած նյութերի մեջ խիստ ուշագրավ է Տիրամոր

¹ 1961—1963 թթ. միջնաբերդի հարավային մասում պեղվեց մի աշտարակ, որի պարագիծը 33,7 մ է: Բուրգի առաջին շարքը շարված է քարից, իսկ մնացածը երեսապատված է թերթած աղյուսով:

խճանկար պատկերը, որը տեղադրված է եղել կաթողիկոսի արևելյան բաբիդում¹։

Դվինի սիստեմատիկ պեղումներն սկսվեցին Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո։ 1937—1939 թթ. պեղումները ղեկավարել է Սմբատ Տեր-Ավետիսյանը, իսկ 1946 թվականից պեղումները ղեկավարում է Կարո Ղաֆազարյանը։ Այժմ էլ շարունակվող աշխատանքների շնորհիվ երևան են դալիս Հայաստանի նյութական մշակույթի բոլոր բնագավառներին վերաբերող պատմա-հնագիտական հարուստ և արժեքավոր նյութեր։ Պեղումների ընթացքում միջնաբերդում բացվել են տարբեր դարաշրջաններին պատկանող պալատական և եկեղեցական շինություններ, տընտեսական և կոմունալ նշանակություն ունեցող կառույցներ, միջնադարյան Հայաստանի արհեստագործության արտադրանքի հիանալի նմուշներ, բարձրարվեստ ներմուծված առարկաներ, դրամներ և այլն։ Պեղումները ցույց տվեցին, որ կյանքը Դվինի բլուրում ծայր է առել էնեոլիթյան ժամանակաշրջանից և հարատևել մինչև մ. թ. XIII դարը։

Կենտրոնական թաղամասում լրիվ բացվեց եկեղեցական և աշխարհիկ շինությունների կոմպլեքսը՝ կաթողիկոս եկեղեցին, կաթողիկոսարանը և այլն։ Քաղաքի հարավ-արևմտյան հատվածում բացվեցին սյունազարդ մի մեծ շենքի մնացորդները։ VI—VII դդ. այդ շինությունը, Կ. Ղաֆազարյանի կարծիքով, հայկական աշխարհիկ ճարտարապետության առավել նշանավոր կառույցներից մեկն է։

* * *

IV—VIII դդ. Հայաստանի և մասնավորապես Դվինի համար տնտեսական և քաղաքական խոշոր տեղաշարժերի շրջան էր։ IV—V դդ. ամբողջ Հայաստանում հաստատվել էին ֆեոդալական հասարակական հարաբերություններ։ Ֆեոդալական հասարակության հաղթանակը, առևտրի ճգնաժամը, հելլենիստական քաղաքների անկումը՝ այս ամենը խորացնում էին հակասությունները արտադրական նոր հարաբերությունների և Արշակունի-

¹ Տիրամոր խճանկարը ունչացել էր Խ. Դազյանի պեղումներից հետո։ Վերջերս հնագիտության և աղագրության ինստիտուտի ավագ գիտ. աշխատակից Գր. Կարախանյանը Հայաստանի պետարխիվում Խ. Դազյանի արխիվը նայելու ժամանակ հայտնաբերում է այդ խճանկարի լուսանկարը, որով պարզվում է, որ այն շատ թերի է եղել։

ների պետական կառավարչության իր դարն առիթ է հելլենիստական սիստեմի միջև։

364—368 թթ. Շապուհ Բ-ի արշավանքների հետևանքով կործանված քաղաքներն այլևս չվերականգնվեցին (Տիգրանակերտ, Վաղարշապատ, Երվանդաշատ, Զարեհավան, Զարիշատ և այլն)։ Դրանով ավարտվեց նրանց անկման սյուրեռը, որն սկսվել էր ավելի վաղ։ Երկրի անտեսական և քաղաքական գործունեությունը փոխադրվեց ֆեոդալական ամրոցները։ Քաղաքների առևտրա-արհեստավորական բնակչությունը գերեզմանվեց։ Այս ամենը խոշոր հարված հասցրեց քաղաքներին՝ արհեստային արտադրությանը և առևտրին։

Արշակունյաց հարստության անկումից հետո (428), Հայաստանը կառավարվում էր մարզպանների կողմից, իսկ հայ նախարարները պահպանում էին իրենց ինքնուրույնությունը, որը քաղաքայլ սահմանափակվում, վերացվում էր իրանական արքունիքի կողմից։ V—VI դդ. Հայաստանում տեղի են ունենում երեք խոշոր ապստամբություն՝ ընդդեմ պարսից տիրապետության։ Այդ ապստամբությունների շնորհիվ Հայաստանը պահպանեց իր ինքնուրույնությունը և տնտեսական ու մշակութային զարգացման հնարավորությունները։

V—VII դդ. Հայաստանն ապրեց մշակութային խոշոր վերելք։ Հենց այդ շրջանում է, որ դրվում են հայկական ֆեոդալական մշակույթի հիմքերը, որի մեջ դեռևս ուժեղ էին հելլենիստական ավանդանքները։

Վաղ ֆեոդալական Հայաստանի մշակութային զարգացումն ուներ իր մի շարք առանձնահատկությունները։ Նախ, այն տեղի էր ունենում երկրի ինքնուրույնության համար մղվող պայքարի պայմաններում, երկրորդ՝ առաջացել էին հայ գիրն ու գրականությունը, դառնալով հայ հոգևոր մշակույթի հիմքը և երկրի ինքնուրույնության յուզական միջոցներից մեկը։ Երրորդ՝ հայ մշակույթը զարգանում էր վաղ քրիստոնեական միջավայրում, տակավին կրելով հեթանոսական շրջանի մտածողության և պատկերացումների կնիքը։ Հայկական գրերի ստեղծմանը հետևեց ազգային դպրության զարգացումը և պատմագիտական, կրոնա-աստվածաբունական և գիտական ծավալուն գրականության հանդես գալը։

Խոշոր առաջընթաց է կատարվում նաև արվեստում, մասնավորապես կիրառական արվեստում։ Եթե քանդակագործության հիանալի կերտվածքները մեզ հայտնի են հիմնականում եկեղև-

ցական ճարտարապետութիւնից, անպա գրավոր աղբյուրները հարուստ վիճակով լինեն եւ պահպանել նյութական մշակույթի մյուս ճյուղերի, մանավանդ կիրառական արվեստների վերաբերյալ: Նյութական մշակույթի հուշարձանների հայտնութեամբն և ուսումնասիրման համար բացառիկ նշանակութիւն ունեն հանրապետութեան մեջ կատարվող հնագիտական պեղումները:

Արաբական տիրապետութեան շրջանում Հայաստանի տնտեսութիւնն ապրեց տևական անկում: Երկրագործութեան և անասնապահութեան անկումը, շինարարական գործունեութեան ընդհատումը, հարկային ծանր քաղաքականութիւնը Հայաստանը կանգնեցրին քայքայման եղբին և հանգեցրին մշակույթի երկարատև անկման: Քաղաքները դարձան ռազմա-վարչական կենտրոններ, որտեղ տեղակայված էին արաբական ղորագնդերը: Միակ քաղաքը, որն ինչ որ շարունակում էր աճել և խաղում էր քաղաքային խոշոր կենտրոնի դեր՝ Դվինն էր:

Դվին քաղաքի հիմնադրման մասին առաջին հիշատակութիւնները մեզ հասել են Փավստոս Բուզանդի (IV դար) և պատմահայր Մովսես Խորենացու (V դար) «Հայոց պատմութիւն» արժեքավոր երկերից: Փավստոս Բուզանդի հավաստի վիճակով մեր Դվինը հիմնադրել է Խոսրով Ա Կոտակ (332—338) թագավորը:

«Եւ ետ հրաման թագաւորն զօրավարին իւրոյ՝ հանել խաշար յաշխարհէն բազում, և բերել զվայրենի կաղին մայրեաց, և տնկել զայն յԱյրարատեան գաւառին. և առեալ յամուր բերդէն արքունի, որում կոչեն Գառնի, մինչև ի դաշտն Մեծամօրի ի բլուրն՝ որ անուանեալ կոչի Դուին, որ կայ ի հիւսիսոյ կողմանէ քաղաքին մեծի Արտաշատու, զգետն խոնարհ մինչև յապարանսն Տիկնունի՝ տնկեցին զկաղինն: Եւ կոչեաց զանուն նորա Տաճար մայրի: Եւ միւս ի մայրեացն յեղէզնաբերանին ի նմանէ ի հարաւակոյս լցին զդաշտն կաղնատուն՝ տնկով և կոչեցին զանուն նորա Խոսրովակերտ: Եւ անդ շինեցին զապարանսն արքունականս, և զերկոսեան տեղիսն պարսպեալ փակեցին. և ոչ կցեցին ի միմեանս վասն պողոտայի ճանապարհին» (Բիւզանդ, III դպր., գլուխ Ը):

Խորենացին ևս խոսելով Խոսրով Ա թագավորի մասին գրում է.

«Նա և զարքունիսն փոխէ վերոյ անտառին յոստ մի, ապարանս հովանաւորս շինեալ, որ ըստ պարսկական լեզուին Դուին կոչի, որ թարգմանի

բլուր: Քանզի ի ժամանակին յայնմիկ Արէս ուղեկցեալ արեգական, և օդք շերմայինք պզտորեալք ժանդահոտութեամբ փչէին. յորմէ ոչ կարուցեալ ժուժել որք յԱրտաշատն բնակեալ էին՝ կամաւ յանձն առին զփոփոխումն» (Խորենացի, գիրք III, գլուխ Ը):

Այսպիսով, IV դարի 30-ական թվականներին Հայոց Արշակունի Խոսրով Ա Կոտակ թագավորը Հայոց արքունիքն Արտաշատից տեղափոխում է Դվին: Արտաշատն ավանդութեան ուժով շարունակում էր մնալ քաղաքական կենտրոն, համայնաժողովների վայր, նախարարական զորաբանակների հավաքատեղի: Արտաշատը IV դարի վերջում մնում էր որպէս միջազգային տարանցիկ առևտրի խոշոր կենտրոն: 387 թ. կնքված պարսկա-բյուզանդական պայմանագրով Արտաշատը համարվել է միջազգային փոխանակութեան երեք կարևոր կետերից մեկը: Այս ամենը վիճակում են, որ մինչև V դարի սկիզբը Արտաշատը խուլ մրցակցութեան մեջ էր նոր բարձրացող Դվինի հետ: Այդ մրցակցութիւնը շարունակվեց մինչև V դարի կեսը, երբ մարզպան Վասակ Սյունեցին ավերեց այն:

Սկզբնական շրջանում Դվինի միջնաբերդը շրջապատված է եղել փոքր բնակավայրով և աստիճանաբար մեծացել է ի հաշիվ Արտաշատից վերաբնակեցված արհեստավորական և առևտրական խավի:

Մինչև V դարի երկրորդ կեսը պատմիչները Դվինի մասին ոչ մի տեղեկութիւն չեն հայտնում: Սակայն հնագիտական պեղումները ցույց են տալիս, որ վերջին Արշակունիների և հայ առաջին մարզպանների օրոք Դվինում կատարվել են շինարարական աշխատանքներ, որոնց հետքերը հասել են մեզ:

1959—1963 թթ. միջնաբերդի զագաթին, առկա մակերեսից հաշված մոտ 4,0 մետր խորութեան վրա բացվեց շինութիւնների մի խումբ, որի մեջ առանձնակի ուշադրութեան է արժանի հաստ հիմնապատերով, կրաշաղախ պատերով, արևմուտքից դեպի արևելք ձգվող քառանկյունի մեծ դահլիճը (երկարութիւնը՝ 28,90 մ, լայնութիւնը՝ 12,5 մ, պատի հաստութիւնը՝ 1,45 մ): Դահլիճը սյունազարդ է եղել, սյան խարիսխներից մեկը պահպանվել է տեղում: Այն իր վրա կրում է անտիկ շրջանի հարդարման եղանակները: Դահլիճը փաստորեն իր ձևով բազիլիկա է, նման IV—V դարերի հայկական բազիլիկ կառուցվածքներին: Դահլիճի կենտրոնական մասում հատակի շաղախը որոշա-

կի կերպով ընդհատվում է, որից երևում է, որ այնտեղ եղել է աստիճանավոր դահավորակ: Դահլիճի շրջապատում սփռված քարերը հիմք են տալիս պնդելու, որ այն դրսից և ներսից երեսուսուստված է եղել սրբատաշ քարերով: Սյունազարդ դահլիճ-ընդունարանը իրավամբ համարվում է Դվինի հնադուրյան կառուցվածքներից՝ Արշակունիների շինարարական գործունեության արգասիք¹:

Դահլիճը մարդպանակալան շրջանում որոշ փոփոխություններ է կրել և, դատելով այստեղ գրտնըված կնքադրոշմներից, օգտագործվել որպես դիվանատուն: Հայրենական կնքագիտության համար մեծ արժեք են ներկայացնում դահլիճում կրաշաղախ հատակից մոտ 40 սմ բարձրության վրա (բոստ երևույթին, մարդպանակալան շրջանում հատակը որոշ չափով բարձրացվել է) հայտնաբերված կավե կնքադրոշմները, որոնցով կնքվել են թերևս կարևոր փաստաթղթեր: Կնիքները, որոնք պատկանել են հայ նախարարներին և բարձրաստիճան հոգևոր գործիչներին, իրենց վրա պարզորոշ կրում են ուղ սասանյան կնիքների թեմատի-

¹ Վերջին տասը տարիների ընթացքում կատարված պեղումները որոշակի նյութեր են ընձեռում Դվինի նախորդ շրջանի պատմության ուսումնասիրության համար: Բացված շինությունները և հնագիտական նյութերը ցույց են տալիս, որ Դվինի բլուրի վրա վաղ հայկական և հելլենիստական ժամանակաշրջանում եղել է խոշոր բնակավայր, որը նաև կրոնական խոշոր կենտրոն էր: Հնագիտական հարուստ նյութերը, հատկապես անտիկ շրջանի գունազարդ խեցեղենը ցույց է տալիս նրա տեղական բնույթը: Սակայն I—IV դդ. նյութերի իսպառ բացակայությունը ստիպում է մեզ ենթադրել, որ Արշակունիները պալատական իրենց շինարարությունը կատարել են ժամանակավորապես լքված վայրում: Հարց է առաջանում. երբ կարող էր ավերվել այդ ծաղկուն բնակավայրը, Հնագիտական իրերի առկայությունը ցույց է տալիս, որ այն կարող էր կատարվել ամենաուշը մ. թ. I դարում: Դվինի միջնաբերդի ստորին շերտում ամբողջ բլրով մեկ անցնում է մի զանգվածային մոխրաշերտ, որը մեծ հրդեհի արդյունք է: Այդ շերտի մեջ հողը և կավը հրդեհից կարմրավուն երանդ են ստացել:

Հայտնի է, որ հռոմեական զորահրամանատար Կորբուլոնը 58 թ. գրավում է Արտաշատը և 58—59 թթ. ձմեռն անցկացնում այդտեղ: 59 թվականի գարնանը հռոմեական զորքը դուրս գալով Արտաշատից, շարժվում է Տիգրանակերտ: Նախքան հեռանալը, հռոմեացիները, Կորբուլոնի հրամանով հրդեհում, չարտաքանգ են անում ու հողին հավասարեցնում Արտաշատը: Սի բան պարզ է, որ Դվինի բլուրի վրա գտնվող բնակավայրը չէր կարող վրիպել հռոմեացիների ուշադրությունից, քի ինչպես երևում է, նույն բախտին է արժանանում նաև այդ բնակավայրը, որը հետագայում, ըստ երևույթին, չի վերականգնվում, մինչև արքունիքի տեղափոխվելը: Եվ բոլորովին զարմանալի չէ, որ դահլիճ-ընդունարանը կառուցված է անմիջապես մ. թ. I դարի շերտի վրա:

կայի ազդեցությունը և թվագրվում են V—VI դարերով: Մարդպանակալան շրջանում Դվինում պետական դիվանի գոյությունն անկասկած է: Այդ մասին ունենք նաև պատմական հետաքրքիր վկայություն, որ Սյունյաց աշխարհի դիվանը ուզում են Դվինից տեղափոխել Փայտակարան. «զի աարցեն զդիւան աշխարհին Սիւնեաց ի Դըւնայ ի Փայտակարան քաղաք» (Սեբեոս, Պատմութիւն ի Հերակլե, Թիֆլիս, 1913, էջ 40):

Դվինի սկզբնական շինություններից է կենտրոնական թաղամասի կաթողիկե եկեղեցու նախնական կառուցվածքը: Այն ներկայացրել է մի եռանակ բազիլիկա՝ 52,4 երկարությամբ և 7 զույգ հաստահեղույս մուկթերով: Բազիլիկ եկեղեցին ավանդատներ չի ունեցել, որը խոսում է նրա հին լինելու օգտին: Կ. Ղաֆադարյանն իր «Դվին քաղաքը և նրա պեղումները» աշխատության մեջ գրում է. «Մատենական տեղեկություններից մեզ հայտնի չէ, թե Դվինի կաթողիկե եկեղեցու սկզբնական շինությունը երբ է եղել կառուցված, բայց Քասաղի տաճարի հետ միասին նա անշուշտ հանդիսանում է քրիստոնեական շրջանի ամենանախնական հուշարձաններից մեկն իր պարզ և անպաճույճ ձևերով, որի համեմատությամբ Երբրույթի, Աշտարակի և Եղվարդի նույնատիպ եռաթև տաճարները նույն դարաշրջանի ճարտարապետական կառուցվածքների ավելի զարգացած օրինակներ են, իհարկե, շինված ավելի ուշ, քան թե Քասաղի և Դվինի տաճարները» (տե՛ս էջ 90):

Այս շրջանում գտնված իրերն ու առարկաներն աչքի են ընկնում իրենց ինքնատիպությամբ: Դրանց թվում հատուկ ուշադրության է արժանի դահլիճ-ընդունարանի շրջակայքում հայտնաբերված կավե պաշտամունքային փոքր սրվակը՝ սբ. Անդրեասի դրոշմված պատկերներով և հունարեն արձանագրությամբ: Կավե և ապակե անոթների մեծ մասը (պնակների, կարասների, ապակե հաստապատ թասերի բեկորներ) որոշակի կրում են նախորդ՝ հելլենիստական դարաշրջանի նյութական արտադրության հարդարման եղանակի, անոթների ձևերի կնիքը: Նույնը նկատվում է նաև մետաղե արտադրանքի վրա (կորաշեղբ դանակներ, նետասլաքների բնորոշ տիպեր և այլն): Սակայն նյութական արտադրանքը ձեռք է բերում առանձնահատկություններ, որոնք բնորոշ են վաղ ֆեոդալական մշակույթին:

V դարի կեսից սկսվում է Դվինի վերելքը: Այդ ժամանակաշրջանում Դվինը դարձել էր առաջա-

քած մարզպանութեան վարչական կենտրոնը՝ փաստորեն Հայաստանի մայրաքաղաքը: Այդ վերելքը տևում է մինչև VII դարի վերջը, երբ արաբները վերջնականապես հաստատվում են երկրում, թեև դրանից հետո էլ Դվինը պահպանում է իր նշանակությունը՝ դառնալով արաբների ստեղծած նոր վարչական միավոր Արմինիայի կենտրոնը: Դվին քաղաքի այս շրջանի պատմության վերաբերյալ մեզ են հասել հայ և օտար աղբյուրների ուշագրավ վկայությունները, որոնք խոսում են Դվինում տիրող քաղաքական անցուղարձեռի, կատարվող շինարարության, քաղաքի ազգային և սոցիալական կազմի և այլնի մասին:

Խոշոր երևույթ էր հոգևոր կենտրոնը՝ Վաղարշապատից Դվին տեղափոխելը, որը տեղի ունեցավ Գյուտի կաթողիկոսության շրջանում (461—478): Տեղափոխման հետ է կապված Դվինի մի շարք մոտումենտալ շենքերի շինարարությունը, որոնցից է միջին դարերի հայկական աշխարհիկ ճարտարապետության եզակի հուշարձան կաթողիկոսական պալատը: Այն, անշուշտ, պետք է կառուցված լիներ անմիջապես աթոռի տեղափոխումից հաջորդող տարիներին, այսինքն V դարի 60-ական թվականներին¹: Տուֆակերտ այս շենքի կոմպոզիցիոն առանցքը կազմում է նրա ամբողջ երկայնքով ձգվող սյունազարդ դահլիճը: Այն ունենալով 26,9 մ երկայնք և 11,5 մ լայնք, երկու շարք կազմող չորսական սյուներով բաժանվում է երեք նավի, իսկ նրա հյուսիսից և հարավից ձգվում են հնգական սենյակ ունեցող թեկեր: Ներկայումս պահպանվել են պալատի հիմնապատերը, սյունազարդ դահլիճի հինգ խորիսխները և մեկ արմավենադուրը խոյակ, որոնք զարդարում են Դվինի կենտրոնական թաղամասի ավերակների ընդհանուր անսամբլը:

Դվինն առանձնապես բարեկարգվում է Վահան Մամիկոնյանի մարզպանության տարիներին, 485 թ. սկսած: Այդ մասին տեղեկություններ են հաղորդում Ղազար Փարպեցին, Աբեռոսը, Հովհաննես Դրասխանակերտցին և այլ պատմիչներ: Ըստ այդ վկայությունների, Վահան Մամիկոնյանը նորոգել է Հայաստանի, այդ թվում նաև Դվինի մի շարք եկեղեցիներ: Մեզ թվում է, որ նրա շինարարական գործունեությունը մայրաքաղաքում ա-

վելի լայն ծավալ է ընդունել և հնարավոր է, որ կատարված լինի նաև աշխարհիկ բնույթի շինարարություն, քանի որ Դվինի կաթողիկոս եկեղեցին այդ շրջանում փոփոխություններ չի կրել իր կոմպոզիցիոն ձևերում: Կաթողիկոս այդ ժամանակ արդեն ունեցել է արտաքին սյունազարդ սրահ և արևելյան խորանի երկու կողմի ավանդատները: Ղազար Փարպեցին խոսելով Վահան Մամիկոնյանի մարզպան ընտրելու հետ կապված հանդեսների մասին, գրում է. «Իսկ տէրն Մամիկոնեանից Վահան, զօրավարն հայոց և մարզպան, ընկալեալ զհրովարտակն մարզպանութեանն ի ձեռաց դեսպանին, թէպետ և զխանտածութիւն հայ մարդկան ճանաչելով ծանրանայր ընդ իրս՝ այլ սակայն և ոչ ընդդիմանալ հրամանի թագաւորին իշխէր և անհնազանդ լինել: Առեալ զհրովարտակն՝ խնդրէր վաղվաղակի անդրուվար՝ երթալ ի տուն Աստուծոյ: Եւ լուեալ զայս մարդկանն որ ի քաղաքին էին, գրհ տուեալ առ հասարակ ամենայն մարդոյ, նախարարաց և ազատաց, ոստանկաց և ուսուցաց, արանց և կանանց, ծերոց և տղայոց, այլ և հարսունք անգամ յառագաստաց, մոռացեալ սռ վայր մի խնդին զամօթ հարսնութեան՝ գիմեալ ընթանային յեկեղեցին: Եւ ոչ բաւեալ ընդունել զամենեսեան տանն Աստուծոյ՝ լնուին արտաքոյ սրահք եկեղեցոյն և փողոցք և ամենայն տեղիք հրապարակացն շուրջանակի» (Ղազար Փարպեցի, ՂԹ, 1907, 393—394):

Արդ, երբ կարող էր կառուցված լինել կաթողիկոսի արտաքին սյունասրահը: Թովմա Արծրունին և Հովհաննես Դրասխանակերտցին հայտնում են, որ V դարի կեսերին Վնդո անունով հայ նախարարներից մեկը, Շավասպ Արծրունու հետ Դվինի եկեղեցին վերածում է մեհյանի: Այդ ժամանակ Վարդան Մամիկոնյանը հարձակվում է նրանց վրա, քանդում մեհյանը և կառուցում նոր եկեղեցի: «Եւ քանդեն աւերեն զմեհեանն և յատակեալ զտեղին՝ շինեն նորին քարամբք զմեծ եկեղեցին զսուրբ Գրիգորն ի Բլուր տեղտչն, և փոխեն անդ զկաթողիկոսն հայոց զԳիւտ» (Թովմա, 1852, էջ 86): Այս վկայություններից պարզ երևում է, որ վերաշինման աշխատանքները կատարվել են V դարի 50-ական թվականներին և անհավանական չէ, որ արտաքին սյունասրահը հենց այդ ժամանակ էլ կառուցված լինի: Այնուհետև եկեղեցին կրել է նոր փոփոխություններ և, ինչպես երևում է նրա բացված ավերակներից, ստացել է խաչաձև հատակադիմ ունեցող կենտրոնազմբթ

¹ Դվինում հոգևոր կենտրոնը հաստատվելու, ինչպես նաև նրա հետ կապված աշխարհիկ և եկեղեցական կառույցների շինարարության մասին ավելի մանրամասն տե՛ս Կարո Առաքելյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, զրուի 3-րդ:

հորինվածք: Կաթողիկեի վերջին վերակառուցման մասին մենք ունենք շատ ավելի հավաստի աղբյուր, ինչպիսին Սեբեոսն է: Նա վերակառուցումը վերագրում է մարզպան Սմրատ Բազրատունուն՝ VII դարի սկզբին, ավելի ստույգ 608—617/19 թթ.: Դվինի հոյակապ կաթողիկե եկեղեցին, որն իրավամբ կարելի էր համարել հայկական V—VII դդ. ճարտարապետության գլուխգործոցներից մեկը, հիմնովին կործանվում է 893 թ. երկրաշարժի ժամանակ:

Կաթողիկե եկեղեցուց հյուսիս բացվել են թանձր պատերով միանավ րադիկիկայի ավերակները: Այդ բազիլիկան, համաձայն աղբյուրների վկայության, կառուցվել է VI դարի կեսերին, որին համապատասխանում են նաև շենքի ճարտարապետական ձևերը:

Մարզպանական շրջանում, ինչպես երևում է պեղումներից, մեծ քանակությամբ աշխարհիկ շինություններ են կառուցվել: Այդ շինությունների մի մասը, որոնք եղել են Դվինի քաղաքային թաղամասերում, շեն պեղվել և մեզ հայտնի են դեռևս հատուկներ օրինակներով: Բացված կառուցվածքների շարքում առանձնակի տեղ է գրավում կենտրոնական թաղամասից մի քանի հարյուր մետր արևմուտք գտնվող սյունազարդ շենքը, որի պեղումները դեռևս ավարտված չեն, բայց արդեն պարզ է, որ գա մի մեծ շինություն է՝ կազմված երեք շարք սյուներով ընդարձակ դահլիճից և նրան կից բաժանմունքներից: Սյան խարխիսների առատությունը խոսում է այս կառուցվածքի վեհության և շքեղության մասին: Կարծիք կա, որ այն կարող է լինել կարավանատուն, որը սակայն ենթակա է ստուգման հետագա պեղումներով: Շինարարական կառուցվածքի առանձնահատկություններով, սյան խարխիսների հարդարման ձևով այդ շինությունը վերագրվում է VI—VII դդ.: Շրջակա գյուղերի բնակիչների պատմելով, քաղաքի այդ տերիտորիայի վրա եղել են մանր ու խոշոր բլուրներ, որոնց տակ անշուշտ գտնվել են այդ թաղամասի շենքերի ավերակները: Հողերը մշակելու համար այդ բլուրները հարթեցնելու ժամանակ մերձակա գյուղերի բնակիչները տարել են մեծ քանակությամբ սրբատաշ տուֆե քարեր, որոնք պատկանել են քաղաքի մոնումենտալ կառույցներին: Եվ, ընդհանրապես, այդ մասում գտնվող մեծաքանակ իրերն ու առարկաները խոսում են այն մասին, որ այստեղ պետք է տեղավորված լինեին քաղաքի առևտրա-արհեստավորական թաղամասերը: Այդ

հատվածում գտնված տարբեր իրերի արտադրական խոտանի փաստերն ավելի քան հաստատում են այդ ենթադրությունը:

Դվինի միջնաբերդում մարզպանական շրջանում կառուցված շինությունները խիստ տուժել են շինարարական հետագա աշխատանքների ժամանակ և նրանցից մեզ են հասել փշրանքներ: Դվինի միջնաբերդում որոշ շափով պահպանվել են նաև այդ դարաշրջանի հում աղյուսից պատրաստված շենքի մնացորդները, սակայն խիստ քայքայված վիճակում:

Դվինում V—VII դդ. լայն ծավալ էր ստացել առևտուրը, որի մեջ իր մեծ բաժինն ունեւր միջազգային տարանցիկ առևտուրը: Ըստ երևույթին, Արտաշատի դերը խիստ նվազելուց հետո Դվինը դառնում է այն երեք հանգուցակետերից մեկը, որը նշեցինք վերևում: Ի դեպ, պետք է նշել, որ 562 թ. բյուզանդական կայսր Հուստինիանոսի և պարսից արքա Նոսրով Անուշիրվանի միջև կնքված պայմանագրի 4-րդ կետով ուժի մեջ էր մնում IV դարի վերջին կնքած պայմանագրի՝ առևտրի փոխանակման սահմանային կենտրոնների մասին: Դա արդեն խոսում է այն մեծ դերի մասին, որ խաղացել է Դվինը VI դարում, միջազգային տարանցիկ առևտրի բնագավառում: Այդ բանը հաստատվում է նաև Պրոկոպիոս Կեսարացու վկայությամբ. «Դուվին (Դվինը) շատ բերքատու երկիր է, ունի բարեխառն օդ և լավ ջուր, Թեոդոսիոպոլսից հեռու է ընկած ութը օրվա ճանապարհով: Այստեղ դաշտերը հարթ են և հարմար ձիավարության: Միմյանց շատ մոտիկ գտնվող բազմամարդ գյուղերը բնակեցված են առևտրականներով, որովհետև Հնդկաստանից, հարևան Վրաստանից և պարսիկների և նույնիսկ հռոմեացիների հյատակության ներքո գտնվող գրեթե բոլոր տեղերից այդտեղ են բերում ապրանքներ, որոնցով նրանք առևտուր են անում» («Հոմմեագիների պատերազմները պարսիկների դեմ», հատ. 2-րդ, դ. 25): Պրոկոպիոսի նկարագրության մեջ ուշագրավ է վկայությունն այն մասին, որ «միմյանց շատ մոտիկ գտնվող գյուղերը բնակեցված են առևտրականներով»: Օտարագրի վաճառականների քաղաքից դուրս բնակվելը համապատասխանում էր միջնադարյան քաղաքի անվտանգության պահանջներին և այդ առթիվ կան ուղղակի վկայություններ:

Դվինն աստիճանաբար դառնում էր նաև արհեստագործության խոշոր կենտրոն: IX—X դդ. արաբ մատենագիրները՝ Ալ-Յակուբին, Ալ-Մուկա-

դասին, Ալ-Իստահրին և ուրիշները մեծ գովեստով են խոսում Դվինում արտադրվող կերպասեղենի, գորգերի, բանվածքների, դարձեղեն արտադրանքի և նրա վոխանակութան մասին: Առանձնակի ուշադրություն է հատկացվում «ուրդան կարմիր» ներկին, որն արաբներն անվանում էին «կըրմըզ»: Ամենայն հավանականությամբ այս առարկաներն արտադրվել են և վոխանակվել վաղ միջնադարում, հատկապես գորգագործության վերաբերյալ պահպանվել են որոշակի փաստեր: Որոշ հեղինակների կարծիքով, Հայաստանից արտահանվել են նաև ձիեր, մետաղի հումք և տեղական արհեստային արտադրանքի բաղմաթիվ տեսակներ: Դվինում, ըստ երևույթին, փոխանակության կարևորագույն առարկաներից մեկը եղել է շինական մետաքսը: 572 թ. ապստամբությունը ճնշվելուց հետո նրա ղեկավարները փախում են Բյուզանդիա, իրենց հետ տանելով մեծ քանակությամբ մետաքս, որը հավանաբար նրանք վերցրել էին Դվինից:

Դվինում առևտրի ծավալման մասին վկայում են նաև պեղումների ընթացքում հայտնաբերված իրերը և առարկաները: Այդպիսին են, օրինակ, ապակե անոթները՝ կլոր վերադիր ըլթակներով թասեր, որոնց մի մասն իրանական ծագում ունի և հավանաբար ներմուծվել է VI—VII դարերում: Դվինում գտնվել են զգալի թվով սասանյան, բյուզանդական և արաբական դրամներ:

Հայաստանի ընդհանուր քաղաքական վիճակին համապատասխան՝ մարզպանական շրջանում առևտուրն իր ընդհանուր զարգացման հետ մեկտեղ ցուցաբերել է նաև լճացման և մի գուցե որոշ անկման տենդենցներ: Դա առաջին հերթին վերսրբերում է V դարի ապստամբությունների ժամանակաշրջանին, ինչպես և VI—VII դդ. պարսկաբյուզանդական երկարատև կռիվների շրջանին: V—VII դդ. զգալի զարգացում ապրեցին արհեստագործության տարբեր ճյուղերը՝ խեցեգործությունը, մետաղագործությունը, ապակեգործությունը, շինարարության հետ կապված տարբեր տիպի արհեստները, ոստայնանկությունը, գորգագործությունը և այլն: Այդ զարգացումն սկըղրնական շրջանում շատ դանդաղ էր ընթանում, պատմա-քաղաքական և վաղ ֆեոդալիզմին բնորոշ սոցիալ-տնտեսական պատճառների հետևանքով:

Դվինի մարզպանական շրջանի խեցեղեն արտադրանքը ինչ որ շափով կրելով անտիկ շրջանի խեցեղենի ազդեցությունը, հանդես է գալիս նոր,

ինքնատիպ գծերով, հատկապես անոթների ձևերի և նախշազարդման տեսակետից: Մյուս կողմից, վաղ միջնադարյան խեցեղենի համար բնորոշ է խեցու ոչ կատարյալ թրծումը, որը նշմարվում է կոտրվածքում սև երիղի առկայությամբ: Համեմատաբար սակավ են կավե բարձրարվեստ իրերն ու առարկաները, որոնք մեծ քանակությամբ հայտնի են հելլենիստական ժամանակաշրջանում, ինչպես և հետագայում՝ IX—XIII դդ.: Ըստ երևույթին, նախարարական վերնախավի կենցաղում կավին փոխարինել էր արծաթը, մի երևույթ, որը լայն տարածում ուներ ուշ-սասանյան դարաշրջանում և անպայման իր ոլորտի մեջ պետք է վերցնեն նաև Հայաստանը: Անոթների նախշազարդման վրա զգալի ազդեցություն է ունեցել ժամանակի քանդակագործությունը: Բուսական օրնամենտի առանձին վերարտադրությունը հանդես է դալիս կիրառական նշանակություն ունեցող իրերի և առարկաների վրա (խաղողի, նուսն զարդ և այլն): Այդ շրջանում Դվինում լայն ծավալ է ստանում կղմինդրի և ջրատար խողովակների արտադրությունը: Քաղաքի մոտում են տալ շենքերի մեծ մասն ունեցել է կղմինդրե ծածկ: Այդ են ապացուցում պեղումներից, հատկապես կենտրոնական թաղամասում գտնված նյութերը, որոնք տարբեր տիպի են և հարդարված են գեղարվեստական բարձր ճաշակով: Մինարարական խեցեղենի արտադրությունը խոսում է այն մասին, որ Դվինը եղել է նրա արտադրության խոշոր կենտրոն, և մատակարարել է հարևան շրջաններին:

Ամենայն հավանականությամբ, V—VII դդ. Դվինում ծայր է առնում հայկական միջնադարյան ապակե արտադրությունը, որն առավել քան խեցեղենը կրում է անտիկ շրջանի ապակեգործության ազդեցությունը և նրա օրգանական շարունակությունն է կազմում: Դվինի վաղ միջնադարյան ապակե վրա բավականին ուժեղ է մանավանդ սիրիական ապակեգործական կենտրոնների ազդեցությունը, մի հանգամանք, որը բազմիցս հիշատակվել է անտիկ շրջանի ապակեգործությանը նվիրված ուսումնասիրություններում:

Հայտնաբերված ապակե անոթների մեջ սովոր խումբ են կազմում կլոր և նշաձև ըլթակներով փորագրված հաստ ապակե թասերի բեկորները, տեսնիկական մի յուրատիպ միջոց, որը լայն տարածում է ստացել անտիկ ժամանակաշրջանում և անցել վաղ միջնադարին: Այդ անոթները, որոնք բնորոշ են հայ միջնադարյան ապակեգործության վաղ

շրջանին, հետագայում դուրս են մղվում կիրառությունից, ըստ երևույթին չհամապատասխանելով ապակու համեմատաբար մասսայական արտադրության պահանջներին:

Պեղումներից գտնված մետաղե արտադրանքը, որը գերազանցապես տեղական բնույթ է կրում, խոսում է հայ արհեստավորների բարձր կուլտուրայի, ճաշակի և հմտության մասին: Ոսկուց և արծաթից պատրաստված վաղ շրջանի իրեր մեզ Դվինից համարյա չեն հասել այն պատճառով, որ արաբական տիրապետության ժամանակ նրանք կողոպտվել են, իսկ մի մասն էլ հավանաբար օգտագործվել է դրամահատության մեջ: Պեղումներից հայտնաբերված զենքերը (գերազանցապես նետասլաքներ և նիզակներ) մի անգամ ևս հաստատում են մատենագիրների հաղորդածը Դվինի՝ զինագործության կենտրոն լինելու մասին: Սակավ նյութեր են հայտնի ակնագործության, կնիք պատրաստելու արհեստի վերաբերյալ. գտնվել են ոսկերիչների արտադրական գործիքներ (աքցաններ, հալոցներ, փոքր դեղդիրներ և այլն):

640 թ. տեղի ունեցավ արաբների առաջին արշավանքը Հայաստան: Նույն թվականի աշնանը նրանք գրավեցին Դվինը, ավերեցին և թալանեցին այն և ի լրացումն ամենայնի, բնակչության մի մեծ զանգված գերեվարեցին դեպի հարավ: Այդ դեպքերը մանրամասն նկարագրված են Մեքենոսի մոտ. «Ապա անցեալ ընդ կամուրջն Մեծամորի, հարին ասպատակաւ զամենայն երկիրն, և ժողովեալ զաւար և զգերութիւն բազում յոյժ, և եկեալ բանակեցան ի յեզր մայրոյն խորովակերտի:

Եւ եղև յաւուրն հինգերորդի դիմեցին ի վերայ քաղաքին. մատնեցաւ քաղաքն ի ձեռն նոցա. քանզի արկին մուխ շուրջանակի, մերժեցին ծխովն և նետածգութեամբն զպահապանս պարսպին, և կանգնեալ սանդուխս՝ ելին ի պարիսպն և անկեալ ի ներքս բացին զդուռն քաղաքին: Եւ դիմեալ ի ներքս զաւրք թշնամեացն սատակեցին սրով զբազմութիւն քաղաքին, և առեալ զաւար և զկապուտ քաղաքին, ելին և բանակեցան ի նմին բանակետեգն. որ աւր ՚ էր տրէ ամսոյն ուրբաթի» (Սեբեոս, 1879, էջ 109):

Արաբական տիրապետության սկզբնական շրջանում, այն է մինչև VII դարի վերջը, Հայաստանն ինքնուրույն էր, Դվինը շարունակում էր խաղալ իր կարևոր դերը երկրի տնտեսական, քաղաքական կյանքում: Դվինում 648 թ. տեղի է ունենում եկեղեցական ժողով, որտեղ դրված էր

հունական և հայկական եկեղեցիների միավորման խնդիրը, որի շուրջը մեծ մասաբխումներ տեղի ունեցան: Այդ կապակցությամբ 50-ական թվականներին Կոստանդին Գ կայսրը Դվին է ժամանում, սակայն հաջողության չի հասնում, Դվինում շարունակվում է շինարարությունը, Հովհաննես Դրասխանակերտցու վկայությամբ Ներսես Գ Տայեցի կաթողիկոսը VII դարի կեսերին այստեղ կառուցել է սբ. Սարգիս եկեղեցին, Ենթադրվում է, որ Դվինում հայտնաբերված խոյակներից մի քանիսը կարող են սբ. Սարգիս եկեղեցունը լինել, քանի որ նրանք հիշեցնում են նույն շրջանում կառուցված Զվարթնոցի խոյակները:

VII դարի վերջում և VIII դարի սկզբներին արաբները ստեղծեցին իրենց հյուսիսային «Արմինիա» նահանգը, որի կենտրոնը դառնում է Դվինը: Ըստ երևույթին Դվինի վիճակն այդ շրջանում այնքան էլ մխիթարական չի եղել, որն ստիպել է արաբ առաջին ոստիկաններից մեկին՝ Սբղ ալ-Ադիդին (705—715) շինարարական որոշ աշխատանքներ կատարել քաղաքում, հատկապես պաշտպանական նկատառումներով: Այդ մասին որոշակի վկայություններ պահպանվել են Ղևոնդի (VIII դար) և արաբ աշխարհագիր Բալաձորիի մոտ: «Շինէր վերստին զքաղաքն Դուին հզօրագոյն և ընդարձականիստ մեծութեամբ քան զառաջինն, և ամրացուցանէր դրամբք և դռնափակօք, անցուցանէր շուրջ զպարսպովն պարկէնս փոսից լցեալ ջուր յապաստան ամրոցին» (Ղևոնդ, 1887, էջ 36):

Արաբական ծանր լուծը հաստատվելուց հետո էլ Դվինը միակ քաղաքն էր, որը պահպանեց արհեստային արտադրության և առևտրի կենտրոնի իր դերը, թեև նրա զարգացումը զգալիորեն դանդաղել էր: Առևտրի և փոխանակային հարաբերությունների զարգացման գործում կարևոր դեր խաղաց Դվինում դրամահատության կազմակերպումը: «Դարիլ» մակագրությամբ Աբբասյան ֆելսերը լայն տարածում ունեին Անդրկովկասում և որոշ չափով խթանեցին առևտրի զարգացմանը VIII դարի վերջում:

Հնագիտական պեղումները որոշ նյութեր են ընձեռնում Դվինում արաբների կատարած շինարարության վերաբերյալ: Այդ շինություններից մեզ առայժմ ստույգ հայտնի են երկուսը: Մեկը գտնվում է միջնաբերդի գագաթին, իրենից ներկայացնում է հում մեծ աղյուսներով, թանձր պատերով մի շենք, որը հավանաբար եղել է ոստիկանի


ապարանքը: Շինությունը և նրան հարող ընակելի տարածությունը մոտ 3,0 մ խորության վրա է գտնվում: Նրա երկարությունը 25,0 մ է, լայնությունը՝ 18,4 մ, պահպանված պատերի բարձրությունը՝ 1,75 մ: Հավանաբար կենտրոնում մեծ դահլիճ է ունեցել, որի պատերի տակ ներսից մասամբ պահպանվել են 40—50 սմ բարձրությամբ կավածեփ նստատեղիներ: Շինությունն ունեցել է նաև օժանդակ այլ հարկաբաժիններ:

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում քաղաքի կենտրոնական թաղամասում վերջին տարիների պեղումների միջոցին բացված քարե մեծ շինության մնացորդները: Հյուսիսից հարավ ձգվող այդ շենքի հարավային մասում բացվել է սյունազարդ մի սրահ, տեղում պահպանված շորս փայտե սյուների համար քարե խորիսիներով: Շինության հյուսիսային մասում եղել են նրա տնտեսական բաժանմունքները: Առայժմ դժվար է պատկերացնել կոմպլեքսի ընդհանուր հատակագիծը: Սակայն մի բան պարզ է, որ այդ շինությունն, ամենայն հավանականությամբ, կառուցվել է VIII դարում: Այդ են ապացուցում տեղում հայտնաբերված հնագիտական առարկաները և գրամները: Սյունազարդ սրահը հիշեցնում է հայկական ավանդական «գլխատունը», բնակարանի մի տեսակ, որը լայն տարածում է ստացել քաղաքացիական շինարարության մեջ և Հայաստանի շատ շրջաններում պահպանվել է մինչև մեր օրերը: Շինարարական ավանդների կայունության մասին խոսում են նաև դահլիճի շափերը և խորիսիների տեղադրությունը: Մենք այստեղ անշուշտ գործ ունենք վաղ միջնադարյան աշխարհիկ ճարտարապետության մի կարևոր փաստի հետ, որի լրիվ բացահայտումը կհարստացնի մեր գիտելիքները Հայաստանի միջնադարյան բնակելի տների մասին:

VII—VIII դդ. արհեստագործական արտադրանքի նմուշները սակավ լինելով հանդերձ,

մեղ հասել են բավական լավ վիճակում: Խեցեղեն արտադրանքը շատ միապաղաղ է և գեղարվեստական արժանիքներից համարյա զուրկ: Հակառակ դրան, ապակին շատ ավելի հարուստ է ինչպես զարդարման, այնպես էլ անոթների ձևերի տեսակետից: Հստ երևույթին, այդ շրջանում արդեն ապակեգործության արհեստը իր որոշակի տեղն էր գրավում մյուս արհեստների շարքում: Դվինը դառնում է Մերձավոր Արևելքի ապակեգործության կենտրոններից մեկը: Մետաղից պատրաստված առարկաները համեմատաբար քիչ են: Որոշակի վկայություններ կան այն մասին, որ Դվինն արաբական շրջանում մնում էր զինագործության խոշոր կենտրոն, որը զենք էր մատակարարում ինչպես արաբական, այնպես և հայ նախարարական զորագնդերին: Խոսելով Արտավազդ Մամիկոնյանի ապստամբության մասին (VIII դարի կեսեր) Ղևոնդ պատմիչը գրում է. «Են սկիզբն րանիս այսորիկ լինէր ի ձեռն Արտաւազդայ, որ էր ի տանէ Մամիկոնէից. որոյ երթեալ ի մայրաքաղաքն Դուին՝ կազմութիւն մեծ առնէր զօրաց իւրոց. և ստանայր անդ զէնս և անօթս պատերազմի, և վառէր զինքն հրագիւք և սաղաւարտիւք և ամենայն սպառազինութեամբք, և մտերիմ զինքն երևեցուցանէր ղօրացն Իսմայելի, իբր թէ մարտնչել ընդ թշնամիս նոցա կազմիցի» (Ղևոնդ, էջ 138): Դվինում զարգացած գորգագործության, ոստայնակության և այլ արհեստների վերաբերյալ բազմաթիվ վկայություններ են պահպանվել արաբ մատենագիրների մոտ:

Դվինի տնտեսական և առևտրական նոր վերելքը սկսվում է IX դարի կեսերից, երբ ամբողջ երկիրը թոթափում է արաբական լուծը: Այդ վերելքը տևեց մինչև XIII դարի կեսերը, երբ մոնղոլական արշավանքների հետևանքով քաղաքը հիմնահատակ կործանվեց:



Ն Յ Ո Ւ Թ Ա Կ Ա Ն Մ Շ Ա Կ Ո Ւ Թ Թ Ը

Ա. ՄԵՏԱՂԵ ԻՐԵՐ ԵՎ ԱՌԱՐԿԱՆԵՐ

Աշխատանքային գործիքներ: V—VIII դդ. Դվինում հայտնաբերված մետաղե իրերի ժողովածուում իրենց ուրույն տեղն ունեն սակավաքանակ աշխատանքային գործիքները, որոնք որոշ գաղափար են տալիս արտադրողական ուժերի զարգացման վերաբերյալ: Գործիքները հիմնականում երկաթից են և վատ են պահպանվել: Աշխատանքային գործիքները բաժանվում են մի քանի խմբերի: Գյուղատնտեսական աշխատանքներում օգտագործվել են թեթև գուլանը, արորը, մանգաղը, ցաքատը և այլն: Մանգաղները գտնվել են բեկորներով և իրենց արտաքին տեսքով չեն տարբերվում ուշ շրջանի մանգաղներից: Մեծ հետաքրքրություն է ներկայացնում թեթև գուլանի խոփը (VII—IX դդ.), որը հայտնաբերվել է կենտրոնական թաղամասում: Նույն տիպի խոփ գտնվել է նաև Զվարթնոցի մերձակայքում: Ուշագործված արժանի է երկաթե ցաքատը, որի շեղբը տափակ է, իսկ լեզվակը գամբրով միացված է եղել փայտե կոթին: Ծայրը կեռ է և հատու:

Սրկաթե իրեր հայտնաբերվել են նաև Գառնիի վաղ միջնադարյան շերտերում: Ուշագործված է արժանի մի ձեռնուկադ, թերի մշակմամբ, մկրատի բեկոր, որոնք իրենց մշակմամբ ընդհանրություններ ունեն Դվինի նույնանման նյութերի հետ:

Առանի գործունեության համար կիրառվել են դանակների տարբեր տիպեր: Դանակները, որոնք իրենց արտաքին ձևերով հանդես են գալիս տարբերակներով (կեռ, մանգաղաձև, նեղ, կարճ շեղբերով և այլն), թվագրվում են ուղեկցվող և զուգահեռ նյութերով, ինչպես նաև շերտագրական առումով: Դանակների մի մասի ձևերը կրկնվում են նաև հետագա դարերում, որը խոսում է նրանց մնայուն լինելու մասին: Գտնվել են տաշտաքերիչներ, որոնք ունեն տափակ, լայն գլուխ և բարակ պոչ: Դազար Փարպեցին թվարկում է դարբնի աշ-

խատանքային մի շարք գործիքներ, ինչպիսին են սալը, ուռնը, կռանը, խարտոցը և այլն: Դրանց նմուշները, սակայն, մեղ չեն հասել: Դվինում մետաղագործական արհեստի արտադրանք են հանդիսացել տարբեր տիպի գամերը, մասնավորապես լայն գլխով դարդագամերը, որոնք օգտագործվել են նաև ծածկի կղմինդրներն ամրացնելու համար:

Դվինի վաղ միջնադարյան շերտերը տվել են զգալի քանակությամբ ոսկերչական արտադրանքի նմուշներ: Արծաթե գդալիկների մի հետաքրքիր ժողովածու հայտնի է Դվինի կենտրոնական թաղամասից, նրանց բերաններն այնքան փոքր են, որ կարող էին օգտագործվել միայն քիչ քանակությամբ փոշի վերցնելու համար: Արծաթե և ոսկրե գդալիկների, բրոնզե փոքր հատիչների առկայությունը IX դարի շերտերում հնարավորություն է տալիս ենթադրել, որ կենտրոնական թաղամասում եղել է ոսկերչի արհեստանոց: Հավանական է, որ տվյալ գործիքների մի մասը պատկանել է ալքիմիկներին, քանի որ վերջին տարիներս նույն պեղավայրից գտնվել են բավարար քանակությամբ ալքիմիական ապակե անոթներ (ալամբիկների բեկորներ):

Զեմբե: Դվինի վաղ միջնադարյան պեղածո մետաղե նյութերում կան զգալի թվով զենքեր (նետասլաքներ և նիզակներ): Զենքերը պատրաստված են երկաթից և ստորաբաժանվում են տարբեր խմբերի: Նետասլաքները, որոնք լավ թվագրվում են ուղեկցվող և հարևան երկրներից հայտնի զուգահեռ նյութերով, հանդես են գալիս տարբեր տեսակներով: Սռաթև հատվածքով նետասլաքներ Դվինում հանդիպում են V—VII դդ. շերտերում: Այդ հանգամանքը մի անգամ ևս խոսում է նրանց հին լինելու օգտին: Սռաթև նետասլաքի վերաբերյալ հետաքրքիր վկայություն է պահպանվել Մովսես Խորենացու մոտ Հայկի և

Բեյի սլատերուղմի նկարադրութեան մեջ, Երկաթի պոչուկավոր եռաթև նետասլաքների հանդես դուրս եւ տարածման ժամանակաշրջանի օդախն կն խոսում նաև Միջին Ասիայի եւ Անդրկովկասի այլ հուշարձաններում հայտնաբերված նյութերը:

V—VIII դդ. լայն տարածում են ստանում ռոմբաձև, ձվաձև եւ եռանկյունաձև հատվածք ունեցող եւ քառանկյուն նետասլաքները: Վերջիններիս բաղաձայնակութունը բացատրվում է այն հանգամանքով, որ նրանք հատկապես IX դարի նետասլաքների հիմնական խումբն են կազմում: Զանկավոր նետասլաքները շատ հազվագյուտ են եւ, ամենայն հավանականությամբ, վաղ միջնադարում նրանք արդեն դուրս են դալիս դրածոթյունից:

Նետասլաքների բաղաձայնակութունը բացատրվում է մի շարք հանգամանքներով. նախ, նետասլաքներն արտագրվել են տարբեր կենտրոններում եւ նախարարական զորախմբերի կողմից բերվել են Դվին: Նրանք ունեցել են նաև կիրառական որոշ առանձնահատկութուններ: Նետասլաքների մի մասը, անշուշտ, օտար ծագում ունի (իրանական, բյուզանդական, արաբական եւ այլն), սակայն նյութերի սակավութունը հնարավորութուն չի ընձեռում այդ խումբն առանձնացնել: Գործածվել են նաև թունավոր նետասլաքներ, որոնց մասին մեզ հայտնում է Եղիշեն. «Պատկանգարան դեղեալ նետիք» (թունավորված նետերով լի կապարճ):

Նետասլաքների ձևերի ուսումնասիրութունն ամբողջությամբ վերցրած երևան է բերում հետաքրքիր ժամանակագրական օրինաչափութուններ: Նետասլաքների մի մասը (եռաթև) սկիզբ է առնում վաղ հայկական շրջանում եւ իր ձևը պահպանում է ընդհուպ մ. թ. VII—VIII դդ.: Նույնը կարելի է ասել նաև ճանկավոր նետասլաքների մասին: Մի այլ խումբ (ռոմբաձև, եռանկյունի հատվածք ունեցողները) ժամանակագրական տեսակետից երևան են դալիս IV—V դդ. եւ հարատևում են մինչև XIII դարը: Քառանկյուն նետասլաքների առանձին ձևերը մենք հանդիպում ենք Գառնիում, անտիկ շերտից: Դվինի պեղումներից երևում է, որ այդ ձևը պահպանվել է մինչև XIII դարը: Ժամանակագրական այս օրինաչափութունը խոշոր կարևորութուն է ներկայացնում հնագիտական հարակից նյութերի եւ ամբողջ շերտի թվագրության համար: Մյուս կողմից, մնալուն ձևերի առկայութունը մեզանից պահանջում է մեծ զգուշութուն:

Նետասլաքների խմբավորումն ըստ ձևերի եւ ըստ ժամանակի համընկնում է հարևան երկրներից հայտնի նյութերի հիման վրա կատարած դիտողութուններին (Միջին Ասիա, անդրկովկասյան այլ երկրներ, հարավային Ռուսաստան եւ այլն):

Դվինում հայտնաբերված նիզակները սակավաթիվ են, բայց իրենց արտաքին տեսքով բաժանվում են մի քանի տեսակների: Առաջին տեսակին պատկանում են հավասարադաս դեպի ծայրը նեղացող ռոմբաձև հատվածքով նիզակները: Երկրորդ տեսակը կազմում են կլոր, կարճ կոթառով, կենտրոնից ձգվող ռոմբաձև սայրով նիզակները: Երրորդ տեսակը ներկայացված է մեկ նիզակով, որն ունի ռոմբաձև հատվածք, նեղ, կենտրոնում փոքր-ինչ ուռուցիկ կարճ սայր: Նիզակների խմբում ենք դասում նաև շենքի մի տեսակ, որը խոզովակաձև է եւ վերջնում է մասսիվ, սուր զանգվածով: Հնարավոր է, որ այն մեր պատմիչների մոտ հիշատակվող «բոլորոտէղ» նիզակն է:

Բոլոր նիզակները լավ թվազրվում են ինչպես հնագիտական ուղեկցվող նյութերով, այնպես եւ VII—VIII դդ. բյուզանդական եւ արաբական դրամներով: Նետ եւ աղեղների, նիզակների, ինչպես նաև նետասլաքների ձևերը ցայտուն կերպով երևան են դալիս վաղ շրջանի պատկերաքանդակներում: Եռանկյուն նետասլաքների ձևերը պարզ դիտվում են նաև սասանյան արծաթե թասերի վրա:

Դվինի վաղ միջնադարյան շերտերում գտնվել են նաև երկաթե գրահի բեկորներ: Նրանք երկու խմբի են բաժանվում՝ հյուսածո եւ թերթիկավոր: Հյուսածո զրահը կազմված է գործված օղակներից եւ ներկայացնում է զրահաշապիկ: Այն խիստ քայքայված է: Թերթիկավոր զրահի թեփուկները իրենց ձևով բաժանվում են մի քանի տիպի (կլոր, նեղ, թմբիկավոր եւ այլն): Նրանց մի մասը թելով կապվել է հաստ գործվածքից պատրաստված հագուստի վրա, իսկ մի մասը գամերով ամրացվել եւ կազմել է զրահաշապիկ: Զրահների վերաբերյալ հետաքրքիր վկայութուններ են պահպանվել մեր վաղ շրջանի մատենագրութեան մեջ: Հյուսածո զրահը «վերտ» է անվանվում Մովսես Խորենացու, Սեբեոսի եւ Շապուհ Բագրատունու մոտ: Երկաթագամ տախտակներից պատրաստված լանջապանակների վերաբերյալ վկայութուն ունի Հովհաննես Գրասխանակերտցին: Զրահների հետաքրքիր ձևերի վերաբերյալ վկայութունները պահպանվել է V—X դդ. պատկերաքանդակների վրա: Զրահները

թվադրվում են ինչպես հարակից նյութերով, այնպես և զուգահեռ առարկաներով (Ուրբնիսի, Փյանջիքենդ և այլն):

Չարդեր և այլ առարկաներ: Դվինում հայանաբերված մետաղե իրերի մեջ դարդերը սակավաթիվ են, զրանով հանդերձ նրանք որոշ հետաքրքրություն են ներկայացնում պատրաստման եղանակներով, ձևերով և կիրառմամբ: Ինքնասուիտ են կանացի դարդարանքի առարկաները՝ ականջօղեխը, կախիկները, ղլխի հերունները, վարսակալները, ապարանջանները: Պղնձե ականջօղեխից երեքը գտնվել են քաղաքի կենտրոնական թաղամասի ստորին շերտում: Դրանք բարակ լարերից օղեր են, որոնց ներքին մասում հագցված են փոքրիկ կիսազնդեր: Կախիկներից մեկը, որը նույնպես գրտնըվել է կենտրոնական թաղամասում, կաթողիկե կեղեցու միջից, պղնձից արված օղակ է, որի մի մասը փաթաթված է լարով: Այդ մասից իջնում են 4 հյուսածո շղթայիկներ, որոնց ծայրերում ամրացված են երկուական քար (քարերը պահպանվել են միայն երկուսի վրա): Նման կախիկների արտադրությունը Հայաստանում նորույթ չէ: Նրանք հանդիպում են Գառնիի դամբարաններում գեոկսանտիկ շրջանից: Նույնանման մի կախիկ պահվում է Նիկողիայի թանգարանում (Կիպրոս): 1947 թ. կաթողիկե կեղեցու մոտ, VI—VII դդ. շերտից գտնված արծաթե դարդերի մի փոքրիկ ժողովածուի մեջ կան երկու օղակաձև կախիկներ, որոնց ծայրերում արված են կլոր օղակներ:

Բարձր վարպետությունը են պատրաստված վարսակալները և շքասեղները: Նրանցից մեկը երկար ձող է, որի վերին ծայրն ունի ջահի տեսք: Դվինից հայտնաբերված թռչունների և կենդանիների զուգններով շքասեղները, դատելով զարդարման ձևերից, նույնպես վաղ միջնադարյան ժազում ունեն:

Գտնված իրերի թվում հանդիպում են նաև գոտինների բրոնզե ճարմանգների առանձին մասերը, որոնք թվագրվում են VIII—IX դդ.: Նրանց դուգահեռները հայտնի են Մինգեչաուրի՝ ժամանակով մոտիկ նյութերում:

Վերոհիշյալ արծաթե իրերի գանձի մեջ են մտնում նաև շորս մատանի: Նրանք իրենց ձևով բաժանվում են երկու խմբի: Մի խումբը բաղկացած է երեք մատանիներից. դրանք կլոր օղակներ են, որոնց ծայրերն իրար չեն հասնում: Այդ մասում դրված է քարե ակ, արծաթե դարդարուն բնի մեջ: Մատանիներից մեկի բունը երկու կողմից ունի

փոքրիկ կլուստ: Չորրորդ մատանու օղակը սնամեջ է, որը մատանու սկի բնի հետ միասին մի ամբողջություն է կազմում: Այլը հագցվել է մատանու վերին, մասսիվ դսնվածի մեջ: Մատանիները ևս նույն գանձի մեջ մտնող հավասարաթև արծաթե խաչի օգնությամբ թվագրվում են VI—VII դդ.: Խաչը վերին մասում ունի օղակ, որով կախվել է: Խաչն ակոսավոր է և թերի, ծայրերում ունի կլոր զույգ ելուստներ: Նման խաչերը լայն տարածում ունեին վաղ միջնադարում: Դվինի կենտրոնական թաղամասում պեղումների միջոցին հայտնաբերվել են թևավոր խաչեր, որոնք ընդհանրություններ ունեն վերոհիշյալ արծաթե խաչի հետ: Իր ձևով արծաթե խաչին շատ նման է պատահական գտնված ոսկե փոքրիկ խաչը, կենտրոնում սասանյան թեմատիկային առնչվող պատկերազարդ գեամայով: Խաչի թևերի կենտրոններում գտնվում է հյուսածո հաստ զարդ, եղբերը սահմանադատված են կոճակաձև դարդերով: Խաչը կախելու համար նույնպես կլոր օղակ ունի: Հավասարաթև խաչ երկաթից հայտնի է Գառնիի IV—V դդ. դամբարաններում: Մետաղե իրերի մեջ խիստ հետաքրքրական է բրոնզե մեծ բանալին, որը գտնվել է 1946 թ. կաթողիկե կեղեցու արևմտյան մուտքի մոտ և հավանաբար վերաբերում է VII դարին: Սա մի բրոնզե երկար ձող է, մեջը դատարի, բռնելու տեղն օղակավոր, բացող մասում ունի երկու իրարից բավական հեռու ատամներ: Բանալիի երկարությունը 29 սմ է, բացող մասը՝ 6,5 սմ:

Վաղ միջնադարյան մետաղե նյութերի հավաքածուի մեջ են մտնում նաև դոնների տարբեր տիպի օղակները, ձիու սանձի մաս, պղնձե թիթեղիկներ, մատանիների բեկորներ, ձողեր և այլն:

Ինքնին հասկանալի է, որ մետաղագործական արտադրանքը չի սահմանափակվել այս փոքրաթիվ իրերի ժողովածուով: Մատենագրական վկայությունները և Հայաստանի այլ վայրերից դրտնըված իրերը խոսում են այն մասին, որ մետաղագործությունը, մանավանդ արծաթագործությունը վաղ միջնադարում զգալի հաջողություններ է ձեռք բերել: Ըստ երեույթին, նրա վրա որոշ աղեցություն է թողել նաև արևելյան արծաթագործական դպրոցը, որը տվել է արվեստի անդուգական գոհարներ: Այդ առումով շատ հետաքրքրական է 1907 թ. Նոր Բայագետում (այժմ Կամո) գտնված արծաթե իրերի գանձը, որի մեջ մտնում էին 3 արծաթե սկուտեղ և շորս դրալիկ: Ելնելով թասերի վրայի պատկերների տեղական տարրերի առկա-

յությունից, կարելի է ենթադրել, որ նրանք պատ-
րաստվել են տեղում:

Բ. Խ Ե Յ Ե Ղ Ե Ն

Դվինի վաղ միջնադարյան շերտերում հայտ-
նաբերված խեցեղենը բաժանվում է երկու մեծ
խմբի՝ շինարարական և կենցաղային:

Շինարարական խեցեղեն: Այս խմբի մեջ մրա-
նում են տարբեր տիպի աղյուսները, կղմինդըր-
ները և փողրակները: Աղյուսների օդաադրծումը,
շինարարության մեջ Դվինում լայն ծավալ էր
ստացել, որը բացատրվում է առաջին հերթին
քաղաքի մոտակայքում քարհանքների բացակա-
յությամբ և շինարարական քարի տեղափոխության
հետ կապված դժվարություններով: Բացի մոնու-
մենտալ շինություններից և հիմնապատներից, մնա-
ցած բոլոր շինությունները և նրանց մանրամաս-
ները կառուցվել են հում և թրծած աղյուսով: Այն-
պիսի մի հիանալի կոմպլեքս, ինչպիսին Դվինի
միջնաբերդի և քաղաքի պարիսպներն են, կառուց-
վել են հում աղյուսով և հետագայում երեսապատ-
վել թրծած աղյուսով: Թրծած աղյուսների չափերն
ամբողջ միջնադարի համար մնայուն են. երկարու-
թյունը ե լայնությունը 20—25 սմ, հաստությունը
5 սմ: Հում աղյուսները հանդես են դալիս տարբեր
չափերով և երևան բերում որոշ օրինաչափություն-
ներ, որոնք պարտադիր են հիշյալ ժամանակաշրջ-
անի համար:

Բացի շինարարական աղյուսներից, Դվինում
հայտնի են նաև մեծ քանակությամբ կավե սալիկ-
ների բեկորներ, որոնք օգտագործվել են շենքերի
բնակելի տարածությունները սալահատակելու,
ինչպես նաև սենյակների ներքին հարդարանքի հա-
մար: Նման սալիկների հիանալի օրինակներ հայտ-
նի են նաև Հայաստանի այլ բնակավայրերից: Հա-
յաստանում գտնված կենդանական զարդամոտիվ-
ներով երկու սալիկ պահպանվում են էրմիտաժում:
Մուլանաման սալիկների բեկորներ մեծ քանակու-
թյամբ կան Սանահինի վանքում, որոնք, ըստ երե-
վույթին, բերվել են Կողբի V—VII դդ. եկեղեցին
պեղելուց հետո:

Հայաստանում կղմինդրների վաղ օրինակները
հայտնի են անտիկ շրջանից: Դրանց արտադրու-
թյունը լայն ծավալ է ստանում V—VII դդ., որը
հետագայում (սկսած X դարից) իր տեղը զիջում է
կղմինդր հիշեցնող քարե սալերին:

Դվինի կղմինդրները հիմնականում հանդես են

դալիս երկու ձևով՝ հարթ և կիսաբոլոր: Հարթ նը-
մուշներն ունեն քառանկյուն եզրեր, ստորին մա-
սում արտահայտված խիստ նեղացումով: Կղմին-
դրների մակերեսի վրա, ներսից արված են ա-
կոսներ՝ անձրեաջքին ուղղություն տալու համար:
Կղմինդրների կենտրոնում կա անցք՝ բարձր պսա-
կով, որտեղից ամրացնող դամն էր անցնում: Եռյն
տիպի կղմինդրներ հանդիպում են Զվարթնոցում,
Աշտարակի Կարմրավոք եկեղեցու ծածկի վրա և
այլուր:

Դվինի VII դարի հարթ կղմինդրների մի մասի
տեսանելի մասերը ներկված են կարմիր գույնով:
Նրանք ծառայել են տանիքները գեղարվեստորեն
զարդարելու համար: Հանդիպում են նաև կարմիր
ներկով արված երկրաչափական զարդեր, որոնք
հիշեցնում են վարպետների նշանները, որը շատ
տարածված էր և բնորոշ այդ դարաշրջանի համար:

Կիսաբոլոր կղմինդրները հարթ կղմինդրների
եզրերն իրենց մեջ առնելով, հիմնականում ծառա-
յել են շենքի ծածկը ձևավորելու համար: Ծածկերի
ճակատները պսակող կղմինդրները պատրաստ-
վում էին եռանկյունաձև ճակտոնով, որը զարդար-
ված էր լինում մատերի կամ բուլբ գործիքի օգնու-
թյամբ՝ թաց կավի վրա փորված հովհարաձև կամ
ծակտակեն քանդակներով: Կան օրինակներ, որոնց
վրա վերարտադրված են մարդկանց դիմապատ-
կերներ: Այդպիսի օրինակ պահպանվել է նաև
Զվարթնոցում: Ծակտոնների առկայությունը
ծածկերի վրա առանձին շքեղություն էր տալիս
շենքի հարդարանքին և ղուտ գեղագիտական նշա-
նակություն ուներ:

Դվինի պեղումներից հայտնի են նաև այլ տի-
պի կղմինդրներ, որոնք ըստ կիրառական առանձ-
նահատկությունների, ունեցել են տարբեր ձևեր և
տեղադրվել են շենքի ծածկի տարբեր մասերում:

Դվինը լինելով խոշոր քաղաք, ունեցել է նաև
իր կոմունալ կառուցումները: Դրանց թվին կարելի
է դասել ջրամատակարարման բարդ սիստեմը,
որն առանձնապես ցայտուն կերպով երևան է գա-
լիս նրա կենտրոնական թաղամասում: Քաղաքի
ջրամատակարարման սիստեմում օգտագործվել
են զուտ կավե խողովակներ՝ փողրակներ: Զրա-
մատակարարման սիստեմն ունեցել է իր քարե
ջրաբաշխները և կարասաձև կավե իջանցքները:
Կարասների վրա արված անցքերն իրենց չափերով
համապատասխանում են Դվինից հայտնաբերված
փողրակների չափերին: Կարասներում ջուրը նըստ-
վածք էր տալիս և մաքրվում: Ըստ երևույթին, ջու-

լը քաղաքի միջնաբերդ է բարձրացվել կալվե խողովակների միջոցով: 1959 թ. միջնաբերդում պատահական կերպով ի հայտ եկան խոշոր շափի խողովակներ, որոնք պատկանել են գլխավոր դժին, իսկ այստեղ փոխադրվել և օգտագործվել էին իբրև թոնրի ակ:

Կենցաղային խեցեղենը բաժանվում է երկու մեծ խմբի՝ տնտեսական նշանակություն ունեցող անոթներ և խոհանոցային ու սեղանի սպասք:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՈՒՆԵՐ

Կարասներ: Դվինի խեցեղենի հավաքածուում նշանակալից տեղ են գրավում կարասները: Ունենալով որոշ ընդհանրություններ, կարասները տարբեր ժամանակաշրջաններում հանդես են գալիս առանձնահատուկ գծերով, որոնք հնարավորություն են տալիս դիտել նրանց զարգացումը, զարգացած երկաթի դարաշրջանից մինչև ուշ միջնադարը: Այդ առումով որոշիչ դեր են խաղում զարդակները:

Դվինի վաղ միջնադարյան կարասներն իրենց ձևերով և հարդարման եղանակներով բաժանվում են տարբեր խմբերի:

Առաջին խմբին են պատկանում համեմատաբար ոչ լայն բերանով և իրանով կարասները, որոնք հատակի մասում ունեն սուր ելուստ և կանգնեցվում էին հատակով՝ հողի մեջ թաղված վիճակում: Կարասների իրանի վերին մասում անցնում է շեղած զարդարուն ոչ լայն դոտի, որը երկու կողմից սահմանագծված է ակոսներով: Նման կարասների գոյությունն ակնհայտ է նաև անտիկ ժամանակաշրջանում (Գառնիի կարասային թաղումները): Այս խումբը կարելի է թվագրել IV—V դարերով: Ուշ միջնադարում կարասների այս ձևերը բացակայում են:

Մյուս տիպը իր ձևով նման է առաջինին, այն տարբերությամբ, որ հատակը տափակ է և լայն, իսկ իրանն ավելի ուռուցիկ: Այս տիպի կարասներն ուսից ներքև կրում են զարդագոտիներ: Առավել բնորոշ է և տարածված եղևնած զարդը: Նման կարասներ հանդիպում են Զվարթնոցում և Հացավան ամրոցում: Շերտագրական դիտողությունները մեզ հնարավորություն են տալիս այս խումբը թվագրել V—VII դարերով:

Հաջորդ խումբը ներկայացված է փոքրադիր, ուռուցիկ իրանով և նեղվիզ կարասներով: Նրանք իրենց վրա կրում են նեղ, վերադիր ուռուցիկ զար-

դագոտիներ: Կարասներից մեկի վրա, իրանի ստորին մասում պատկերված է վերադիր գալարվող օձի զարդամոտիվը: Կարասները թվագրվում են V—VII դարերով: Նույնանման մի կարաս հայտնաբերվել է Գառնիում, քառաբսիդ եկեղեցու մեջ:

Կարասների մյուս խումբն ունի 2—4 կանթեր: Դրանք բաց դեղնավուն, տափակ հատակով, ուռուցիկ մարմնով և կարճ վզով անոթներ են: Կարասների մի մասն ունի կեղծ կիսաշրջան վերադիր կանթեր: Անոթներն իրենց վրա կրում են սուր գործիքի և սանրի օգնությամբ արված փորագիր ուղիղ և ալիքած զարդեր, որոնք շատ բնորոշ են վաղ միջնադարյան խեցեղենի նմուշներին: Կարասները թվագրվում են VII—IX դարերով:

Դվինի պեղումների ընթացքում գտնվել են մեծ և փոքր կարասների բազմաթիվ բեկորներ, որոնց մի մասը պատկանում է ուսումնասիրված ժամանակաշրջանին: Այդ տեսակետից ուշադրության են արժանի փոքրադիր կարասի երկու բեկորներ, որոնք զարդարված են խաղողի որթատունկի վերադիր զարդերով: Խաղողի որթատունկի դարձամոտիվը խիստ տարածված էր Հայաստանի վաղ միջնադարյան հուշարձանների վրա և հայ քանդակագործ վարպետների սիրած թեմաներից էր: Նման զարդամոտիվներով անոթները թվագրվում են VI—VII դարերով: Այդ թվագրմանը լրացուցիչ կովան է հանդիսանում Հացավան ամրոցում գտնված կավանոթի բեկորը, որը զարդարված է վերադիր կոճակներով արված խաղողի ողկույզով:

Լայնաբերան կժեռ: Նման անոթները գերազանցապես աչքի են ընկնում իրենց դեղնավուն խեցիով, ձվածիր իրանով և մասսիվ կանթով: Վիզը պատրաստելու ժամանակ ձևավորել են նաև բերանը, որը սեղմման միջոցով ստացել է ցայտուն եռատերև տեսք: Կժեռի մի մասն ուսի վրա կրում է պարբերաբար իրար հաջորդող, սանրի օգնությամբ արված շուրջանակի և ալիքած զարդեր: Նույն տիպի մի անոթ ունի կարմիր ներկով արված զարդագոտի:

Անոթները ձևերով և զարդամոտիվներով իրենց ուղղակի զուգահեռներն ունեն Միջին Ասիայի հնավայրերից (Փյանջիքենդ) հայտնաբերված նյութերի մեջ և թվագրվում են VIII—IX դարերով:

Երկկանթանի կնուճներ: Ունեն ուռուցիկ իրան, կարճ վիզ և համեմատաբար լայն բերան: Հատակը տափակ է, պատերը հաստ: Ամանները կարմրավուն են և կրակի վրա դնելով մրոտվել են: Մի մասն ունի սովորական կիսաբոլոր կանթեր,

մյուս մասը՝ ունիւն, սկզբումով արված ներձկված ալիքավոր ձևավորումով: Զարգամոտիվները նույնն են, ոլորուն և շրջանաձև փոքրիկ ակոսներ:

Նույնատիպ կճուճներ հայտնի են Քրիլիսիի պեղումներից և թվագրվում են VII դարով: Դվինի օրինակները պատկանում են VIII—IX դարերին և ուշ շրջանի կճուճների նախատիպերն են:

Տաշտեր: Ոչ խորը, փոքր, տափակ հատակով ամաններ են, որոնք պատրաստված են լավ մշակված կարմիր կավից, ունեն հաստ և լայն պսակ: Նրանց մի մասը ներկված է կարմիր և փայլեցված: Տաշտերը պեղումներից գտնվում են միայն բեկորներով: Նրանք մեծ քանակությամբ հայտնի են նաև Գառնիից և թվագրվում են V—VIII դարերով: Այլուսիի հուշարձաններում (Որոտնավանք) նման անոթները հայտնի են X—XI դարերում:

Կաթնամաններ: Բաժանվում են երկու խմբի՝ դուրդի վրա և ձեռքով պատրաստված: Նրանց մի մասի իրանը գնդաձև է, լայն բերանով: Կանթը կլոր է և քիչ բարձր: Մորակը պատրաստված է առանձին և միացված անմիջապես պսակի տակ: Անոթների մի մասը ծորակ չունեն, լայն պսակի վրա մի կողմից ուղղակի ելուստաձև բացվածք է արված: Զեռքով պատրաստված օրինակներն ունեն խիստ արխաիկ տեսք: Ամանները կրակի վրա գնեկով մրտովել են: Անոթներից մեկի կանթերը ելուստաձև են: Այս տիպի կաթնամաններ հանդիպում են V—VII դարերի ժամանակահատվածում: Հստ երևույթին, նրանք լայն տարածում ունեն տնային տնտեսության մեջ, օգտագործվել են ամենօրյա կարիքների համար:

Կաթնամանների շարքին են դասվում նաև Դվինում հայտնաբերված երկու խորը պնակները, որոնք ունեն կլոր, ետ փոքր պսակ և բարձր ծորակ: Մորակի երկու կողմերից արված են կոճակաձև զարդեր: Նույնանման անոթներ հայտնի են Ուրբեխից, որոնք գտնվել են VI—VIII դդ. շերտերում, ինչպես նաև Կասպազակում՝ VIII—X դարերի շերտերում:

ԽՈՉԱՆՈՑԱՅԻՆ ԵՎ ՍԵՂԱՆԻ ՍՊԱՍԷ

Պնակներ: Բաժանվում են երկու մեծ խմբի՝ ծանծաղ և խոր պնակներ: Ծանծաղ պնակներն անխրտիր ունեն օղակաձև ցածրադիր ոտք, կավը կարմրախեցի է, մակերեսը լավ փայլեցրած: Պսակների մի մասը կլոր է և գեպի ներս ճկված: Նրանք հանդիպում են Գառնիի վաղ միջնադարյան

շերտերում: Իրենց վրա կրում են յուրօրինակ պարտաձևեր, հատուկ միայն Գառնիի խեցեղենին: Իրանք կարմիր ներկով զոտու վրա արված ակոսներ են, որոնք հատվում են շեղ փորագիր դարձերով: Պնակներից մի քանիսն իրենց վրա կրում են կարմիր ներկով արված երկրաչափական զարդեր: Նույն տեխնիկայով պատրաստված օղակաձև ոտքով մի պնակ գտնվել է Դվինի միջնաբերդում:

Դվինի IV—VI դարերի շերտերում հայտնաբերվել են պնակների բեկորներ, որոնք իրենց մշակմամբ և զարգամոտիվներով շատ մոտ են անտիկ շրջանի խեցեղենին:

Խորը պնակները հաստ պատերով են, ունեն փոքր լայն պսակ, որն իրանի միացման տեղում առաջացնում է խոր ակոս: Խեցին կարմրավուն է և վատ թրծված: Խորը պնակները զուրկ են նախադարձից և թվագրվում են VII—IX դարերով:

Փոքրադիր կճուճներ: Բաժանվում են երկու խմբի՝ անկանթ և կանթով: Անկանթ նմուշները պատրաստվել են ինչպես դուրդի վրա, այնպես և ձեռքով: Անոթներն ունեն կլոր, որոշ նմուշներ՝ գնդաձև իրան: Անոթների զարդերը խիստ արխաիկ են և շատ բնորոշ վաղ միջնադարյան խեցեղենի զարգամոտիվներին՝ սանրաձև, ուղիղ, փորագիր զարդեր: Անոթների այս խումբը թվագրվում է V—VII դարերով: Զուգահեռները հայտնի են Մինգեշաուրից:

Կանթավոր փոքրադիր կճուճներ սակավ են հանդիպում Դվինի խեցեղենի հավաքածուներում: Այդ տիպի անոթների վրիկները կարճ են: Կանթերի մի մասը պատրուկաձև է: Նրանք հիմնականում թվագրվում են VIII—IX դարերով:

Սափորներ: Աչքի են ընկնում իրենց տարատեսակներով: Ուշագրավ են նեղվիղ, լայն հատուկով սափորները: Այս տիպը շատ բնորոշ է նախորդ ժամանակաշրջանին և իր գոյությունը շարունակում է նաև վաղ միջնադարում: Սափորների վրա բացակայում են զարդերը: Անոթները թվագրվում են VI—VIII դդ.: Նույնպիսի սափորներ հայտնի են Ուրբեխի վաղ ֆեոդալական շերտերում:

Զուգավոր բերանով սափորները հանդես են գալիս Լճի խմբով: Ոճավորված խոյազլուխ, եռտերև-կրեքնով հիշեցնող և կիսաշրջանաձև 4 բաժին ունեցող բերաններով: Անոթների մեծ մասն ունի ուռուցիկ իրան, կտրվածքում կլոր կանթ: Սափորները կատարյալ մշակում ունեն և հարուստ

հարդարանք: Ձևավոր բերանով սափորները հարակից և զուգահեռ նյութերով թվագրվում են VI—VIII դարերով:

Ստվար խումբ են կազմում լայնաբերան ստփորները. նրանցից Լրկուաը հայտնաբերվել են V—VII դդ. շերտում: Անոթներն ունեն ուռուցիկ իրան, զարդարված են ներձկված գոտիներով: Նման անոթներ հայտնի են Մերձավոր Արևելքի հնավայրերում և թվագրվում են VIII—X դարերով:

Գավաթներ: Պեղումներից սակավ են հանդիպում: Իրկու ձևի են, կանթով և անկանթ: Անոթներն ունեն լայն բերան, երկար վիղ և ուռուցիկ պսակ: Նրանց մի մասը զարդարված է փորագիր ոլոր ակոսներով: Գավաթներն ընդհանուր առմամբ թվագրվում են VI—IX դարերով:

Կավե փոքր սրվակներ: Պատրաստված են ձեռքով և մեծ մասամբ հանդիպում են բեկորներով: Մեկին ամբողջական է և ըստ Լրևույթին օգտագործվել է որպես օծանելիքի սրվակ: Նրա մեջ պահպանվել են սնդիկի մնացորդներ: Այս անոթն անդրադարձնում է ապակե սրվակների ձևերը: Սրվակն ունի փոքր իրան, համեմատաբար երկար վիղ և լայն փոված պսակ: Այն թվագրվում է V—VI դդ. (գտնվել է գահանիստ դահլիճի շերտում, կավե ամպուլայի հետ միասին):

Խուպներ: Կավե խուպերի առկայությունը Դվինի վաղ միջնադարյան շերտերում ակնհայտ է: Նրանց մեջ աչքի են ընկնում գաճաղարդ խուպերի առանձին բեկորներ: Խուպերի եղբերի մոտ արված են մեղալիոններ, որոնք կրում են տարբեր բովանդակությամբ զարդեր (կենդանական, բուսական, կենցաղային): Խուպերի վրա պատկերված թեմատիկայում նկատվում է սասանյան շրջանից եկող ինչ որ տարրերի ազդեցություն, որը շատ բնորոշ էր տվյալ շրջանին:

Ճրագներ: Բաժանվում են երեք խմբի: Առաջին խմբին են պատկանում բյուզանդական տիպի նավակաձև ձիթաճրագները: Վերին մասում ճրագներն ունեն երկու անցք՝ մեկը լայն, որտեղից լցվում էր վառվող հեղուկը և փոքր, որի մեջ դրվում էր պատրույգը: Ճրագները պատրաստված են երկփեղկ կաղապարի մեջ: Նրանք իրենց վրա կրում են հարուստ զարդանախշեր: Նման ձիթաճրագների արտագրությունը լայն տարածում է ստանում գեոանտիկ ժամանակաշրջանում և Բյուզանդական կայսրության սահմաններում իր զոյությունը պահպանում մինչև VIII—IX դարերը: Դվինի օբինակ-

ներն իրենց ոճական առանձնահատկություններով և հարակից նյութերով թվագրվում են V—VIII դարերով:

Նրկորոգ խումբը կազմում են կլոր, ուռուցիկ իրանով, ոչ շատ լայն պսակով և խողովակաձև երկար քթով կանթավոր ձիթաճրագները: Դրանք բոլորովին զուրկ են նախշադարձից: Ճրագների այս խումբն իր ծագումով ուղղակիորեն կարող է կապվել բրոնզե ձիթաճրագների հետ. արտաքին տեսքով և մշակվածությամբ շատ ընդհանուր գծեր ունի մետաղե իրերի հետ: Դվինի օբինակներն ընդհանուր առմամբ թվագրվում են VI—IX դարերով: Նույն տիպի ճրագներ շատ քիչ քանակությամբ հայտնի են նաև այլ վայրերից: Զարգացած միջնադարում IX—XIII դդ. նրանց արտագրությունը դառնում է մասսայական:

Ձիթաճրագների մյուս խումբը ներկայացված է ձեռքով պատրաստված տարբեր ձևի փոքրիկ, ոչ խորն անոթներով, որոնց մի կողմում արված է քթիկ՝ պատրույգի համար: Նրանց մի մասն ունի փոքրիկ պոչուկ: Ճրագներից մեկն ուրարտականի նման ունի միջնորմ: Նրանք թվագրվում են V—VIII դարերով:

Կավե այլ առարկաներ: 1. 1961 թ. Դվինի միջնադարում գտնվեց կավե փոքրիկ սրվակ, որի փոքրասիական, բյուզանդական ծագումը ոչ մի կասկած չի հարուցում: Սրվակն առաջին անգամ է հայտնաբերվում Սովետական Միության հնավայրերում: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ սրվակը պաշտամունքային է և սերում է Զմյուռնիայից կամ հարևան մարզերից: Անոթը ձվաձև է, կարճ վիղիկով, քիչ ուռուցիկ, վերին մասում՝ ուսերին ունի երկու անցք՝ թելով կախելու համար: Անոթը պատրաստվել է կաղապարի օգնությամբ: Նրա երկու կողմերում պատկերված է սուրբ Անդրեաս առաքյալի կիսանդրին, որը երկու կողմից ուղեկցվում է հունարեն արձանագրությամբ () ΑΓΙΟΣ ΑΝΔΡΕΑΣ ΑΠΟΣΤΟΛΟΣ: Աշխարհի տարբեր թանգարաններում կան շատ օբինակներ նման պատկերներով, քանի որ առաքյալների դատկերների վերարտագրությունը պաշտամունքային անոթների վրա V—VI դդ. լայն տարածում էր ստացել Բյուզանդական կայսրության սահմաններում: Նրանք արտագրվում էին խոշոր վանքերին կից արհեստանոցներում և «սուրը ջրով» բաժանվում ուխտագնացներին: Դվինի անոթը գտնվել է շերտից և օգնում է թվագրելու իր հետ հայտնաբերված առարկաները:

2. 1938 թ. գտնվել է կապի ներկաման-թանաքաման, որն իր երեսին ունի երեք փոսիկ՝ մեկը մեծ, իսկ երկուսը փոքր: Փոքր փոսիկներից մեկի մեջ երևում է կարմիր, իսկ մյուսի մեջ կապույտ ներկի հետք: Հստ երևույթին, ներկամանը օգտագործվել է ձեռագիր մատյաններ գրելու համար:

Ներկամանի մի կողքի վրա կա հայերեն խիստ մաշված արձանագրություն բոլորաձև երկաթդրի և բոլոր գրի խառը գրությամբ: Արձանագրությունից երևում է, որ այն պատկանել է ոմն Ստեփանոսի: Ներկամանի այս եղակի օրինակը գտնվել է կաթողիկոսարանի հարավային մուտքի մոտ և թվագրվում է VII դարի առաջին տասնամյակով:

3. 1949 թ. կաթողիկե եկեղեցու հյուսիս-արևմտյան կողմում բացվեց բրուտի մի արհեստանոց, որտեղ գտնվեցին կավից պատրաստված երկու նույնանման դուրդ: Դուրդը կավի մի սկավառակ է 23 սմ տրամագծով, որն աման շինողին ծառայել է իբրև պտտովող սեղան: Սկավառակի տակ կու գլանաձև մի մաս, մոտ 14,5 սմ երկարությամբ, որը ծառայել է իբրև առանցիկակալ՝ սկավառակը ծանր թափանիվին միացնելու համար: Ներսից նա ունի դեպի սկավառակը նեղացող մի անցք, որի մեջ սուր ծայրով մտնում էր առանցքը:

Դուրդը, ելնելով գտնված շերտից, կարելի է թվագրել VIII—IX դարերով: Պետք է նշել, որ Դվինում հայտնաբերված բոլոր դուրդերը, որոնք տարբեր ժամանակաշրջանի են պատկանում, իրենց արտաքին ձևով որևէ փոփոխություն չեն կրել: Ներկայումս Հայաստանի տարբեր վայրերում աշխատող բրուտագործների դուրդերը նույնպես ոչ մի էական փոփոխության չեն ենթարկվել:

Դվինում պատահական հայտնաբերվել է մի այլ դուրդ, որի գլանաձև մասը ներքուստ լրիվ դատարկ է, իսկ սկավառակի կենտրոնական մասում արված է անցք, որի մեջ մտնում էր ձողի վերին ծայրը: Երբեմն դուրդերն իրենց վրա կրում էին գեղեցիկ զարդանախշեր (տե՛ս 1962 թ. Այգեստանի գերեզմանոցում պատահական գտնված դուրդը: Նրա սկավառակն օգտագործվել է ավելի մեծ անոթներ պատրաստելու համար):

Խեցեղենի զարդարման եղանակները: Հստ կատարման տեխնիկայի զարգամոտիվները կարելի է ընդգրկել հետևյալ խմբերում. փորագիր, վերադիր-ուռուցիկ, դժային-գունազարդ, դաճաղարգ:

Զարդարման ամենատարածված եղանակը փորագիրն է: Այն հիմնականում կատարվում էր սանրաձև ատամնավոր և սուր գործիքներով: Ամենատարածված դարդը սանրաձևն է, որը լինում է

ինչուրև ուղիղ, այնպես էլ ալիքավոր, կազմված մի քանի զուգահեռ գծերից: Նրանք հիմնականում արվում էին մեծ չափի անոթների, փոքրադիր կարասների վերին մասում անմիջապես վզի տակ կամ վերև: Շատ հազվադեպ հանդիպում է փորի կենտրոնական մասում և մեծ մասամբ մեկ կամ երկդժանի են լինում: Վաղ միջնադարյան խեցեղենի դարդերից շատ տարածված են նաև սուր գործիքի օղնություն կատարված փորագիր դարգը, որը հանդես է դալիս ստորակետաձև մանր եռանկյունիներով, ձվաձև, շեղ գծերով և այլն: Այսպիսի զարդամոտիվներ հիմնականում իրենց վրա կրում են փոքր կճուճները, սափորները, պնակների որոշ տեսակները: Այս դարդերը երկու կողմից եզերված են ակոսներով: Սուր գործիքի օղնությամբ արվում են նաև դժազարդի տարրեր վարիանտներ՝ շեղ, եղևնաձև, որոնք հանդիպում են կարասների վրա և միմյանց հաջորդող ուղղահայաց և հորիզոնական խոր գծեր պնակների և թասերի վրա:

Վերադիր զարդերը հիմնականում երկրաչափական և բուսական են: Նրանց նմուշները սակավ են. գերազանցապես հանդես են դալիս կոճակների ձևով փոքր չափի սափորների և պնակների (կաթնամանների) վրա: Տարածված էր նաև վերադիր հորիզոնական-ղուգահեռ և ալիքաձև դժերով արվող զարդը: Ինչպես նշեցինք, Դվինում և մասնավորապես Հացավանում հանդիպում են նաև խաղողի զարդեր: Դվինի կարասները գրեթե զուրկ են վերադիր նախշերից, չնայած այն հանգամանքին, որ որոշ ուսումնասիրողներ վերագիր զարդերի առկայությունը բնորոշ են համարում վաղ կարասների վրա:

Կարմիր ներկով նկարազարդումները շատ ցայտուն հանդես են գալիս կղմինդրների վրա: Նրանք հիմնականում երկրաչափական գծերի կամ ալիքների ձևով կատարված որևէ գեղարվեստական մտահղացումից զուրկ զարդեր են: Մանրակրկիտ ուսումնասիրությունները շերտազրական առումով և առկա հնագիտական նյութերը (խեցեղեն) ցույց են տալիս, որ գունազարդման տեխնիկան ինչ որ չափով շարունակում է իր գոյությունը և այլ բրանգավորմամբ պահպանվում ընդհուպ XIII դարը (դրոշմազարդ կարասներ, ներսից խաչաձև զարդերով պնակներ, լայն կարմիր դոտիներով սափորներ և այլն): Դվինում և Գառնիում հայտնաբերված նյութերում, մասնավորապես պնակների մեջ հանդիպում են այնպիսիները, որոնք կրում են կարմիր դոտերով շեղ նախշեր: Այս երևույթը

նշմարում ենք նաև միջինասիական հուշարձաններից հայտնի ժամանակամերձ խեցեղենի վրա:

Ի տարբերություն ուշ սասանյան և միջինասիական ժամանակամերձ ուշագրավ նյութերի, գրոշմադարձ խեցեղեն Հայաստանում քիչ է գրտնրված: Կան առանձին բեկորներ, որոնց թեմատիկան սերտորեն առնչվում է սասանյան գրոշմադարձ խեցեղենի վրա պատկերված սյուժեների հետ: Շերտագրական ղիտողությունները թույլ են տալիս ասելու, որ նրանք պատկանում են IX—X դարերին: Բացառված չէ, որ մանրակրկիտ ուսումնասիրությունները հետադաշում երևան կրեորեն վաղ միջնադարյան օրինակներ: Գրոշմադարձ խուփերի հիանալի օրինակներ մենք ունենք սոռայժում միայն պալատական դահլիճի շրջակայքում գտնված իրերի մեջ: Նրանք բաժանվում են բուսական (ոճավորված ծաղիկներ), երկրաչափական և կենդանական դարդերի: Նկատենք, որ գրոշմադարձ իրերը շատ քիչ են և հնարավոր չէ որևէ կոնկրետ եզրակացություն հանգել:

Գ. Ա Պ Ա Կ Ի

Հայաստանի միջնադարյան նյութական մշակույթի մեջ իր ուրույն տեղն ունի Դվինից հայտնաբերված ապակեղենը: Այն հանդես է գալիս տարբեր տիպի թասերով, սրվակներով, գավաթներով, բաժակներով և այլն: Պատրաստման եղանակով և դարդանախշերով նրանք նույնպես բազմատեսակ են: Անտիկ շրջանի ապակեգործությունը ելակետային նշանակություն ունի Դվինի վաղ միջնադարյան ապակեգործության համար: Միաժամանակ հանդես են գալիս վաղ ֆեոդալական մշակույթին բնորոշ ուրույն գծերը, որոնք հատուկ են նաև ամբողջ Մերձավոր Արևելքի համար:

Ապակու վերաբերյալ մատենագրական վկայությունները շատ աղքատիկ են: Ուշագրավ է Ագաթանգեղոսի վկայությունը III—IV դդ. Վաղարշապատում Հռիփսիմյան կույսերի կողմից ապակե ուլունքների արտադրության վերաբերյալ:

Ապակու արտադրանքի ժամանակագրական և տիպոլոգիական բնութագրման գործում կարևոր են նաև Անդրկովկասի և Մերձավոր Արևելքի պեղումներից հայտնաբերված և արդեն հրատարակված նյութերը:

Դվինի վաղ միջնադարյան ապակեղենը սակավաթիվ լինելով հանդերձ, ըստ պատրաստման եղանակների ստորաբաժանվում է մի քանի տիպերի:

1. Ազատ փչման եղանակով պատրաստված ապակեղեն: Այս եղանակը, որն այնքան լայն տարածում ուներ անտիկ ժամանակաշրջանում, վաղ միջնադարում իր տեղը զիջում է մյուս եղանակներին, սակայն ժամանակավոր, քանի որ հետագա դարաշրջաններում այն լայն գործադրություն է ստանում: Համենայն դեպս նյութերի սակավությունը դեռևս հնարավորություն չի ընձեռում ավելի կոնկրետ ընդհանրացումներ անելու:

Ազատ փչման եղանակով պատրաստված անոթների թվին են պատկանում փոքր սրվակները՝ տանձաձև և կլոր իրանով: Ապակիների մի մասը խիստ էռողիայի է ենթարկվել, որի հետևանքով անոթների վրա առաջացել են խիտ ցանցեր: Նրկարավիզ անոթներից պահպանվել են միայն նեղ և երկար վզերը: Դվինի ապակիներից հար և նման բեկորներ հայտնի են Գառնիի վաղ միջնադարյան շերտերում:

2. Կաղապարի մեջ փչելու եղանակով պատրաստված ապակեղեն (բարակ պատերով ապակե անոթներ): Այս տիպի մեջ են մտնում բաժակները, թասերը և այլ բարձրարվեստ առարկաներ: Բաժակները շատ քիչ են և կրում են անտիկ շրջանի ապակիների բնորոշ զարդանախշերը: Բաժակներից մեկն իր վրա կրում է կապույտ ցայտեր: Նման զարդանախշումը լայնորեն տարածված էր V—VI դարերում, Հարավային Ռուսաստանի դամբարաններում գտնված նյութերի մեջ: Բաժակների առանձին բեկորներ հայտնաբերվել են Գառնիում, որոնք ընդհանրություններ ունեն Դվինի օրինակների հետ:

Թասերը հիմնականում բաժանվում են երկու խմբի. փոքր, ետ ծալված շրթերով, որոնք իրենց վրա կրում են շեղ կանելյուրներ: Նման անոթները գերազանցապես դեղնականաչավուն են: Մյուս խումբը ներկայացված է ոչ խորը փոված, տափակ հատակով ափսեներով: Թասերի գույները և շեղ կանելյուրների առկայությունը հնարավորություն են տալիս նրանց մի մասին դասել թաս-ճրագների թվին, որոնք կախված են եղել կամ ագուցվել մեծ ջահերի վրա: Այս ենթադրությունն ավելի համոզիչ է դառնում Դվինի կենտրոնական թաղամասում, անմիջապես կաթողիկե կիկեղցուն կից շինությունում, մեծ հորերի մեջ գտնված նույնանման ապակու մի մեծ ժողովածուի գյուտում:

Նկարագրված ամբողջ խումբը հարակից նյութերով և շերտագրությամբ թվագրվում է VII—IX դարերով:

Նույն խմբի մեջ են մտնում բազմաթիվ բեկոր-

ներ՝ ղարդարված բուսական և երկրաչափական տարբեր վարդերով: Ուշագրավ է նաև տերևների և ստղի վերագիր ղարդով տափակ իրի բեկորը: Տվյալ դեպքում նման ղարդը ընդհանուր ազդերսներ ունի ժամանակամերձ հուշարձանների վրա առկա քանդակների, մասնավորապես Զվարթնոցի բարձրաքանդակների հետ, որը հնարավորություն է տալիս այն թվագրել VII դարով:

3. Կաղապարի մեջ փշելու և սառը մշակման եղանակով պատրաստված (փորագիր) ապակեդեն: Այս եղանակով պատրաստված անոթները հիմնականում ներկայացված են փոքրիկ կիսագնդաձև թասերով և երկարավուն սրվակներով: Նրանք իրենց վրա ունեն ճախարակի օգնությամբ հղկումով ստացված կտր և ձվաձև օղակներ: Ապակիները հաստ են, դեղնավուն և միատեսակ բնորոշ պահպանվածությամբ: Նույնատիպ թասերի բեկորներ մեծ քանակությամբ հայտնաբերվել են Հտոցավան ամրոցում: Հղկված թասերի այս խումբը երևան է դալիս սկսած IV—V դարերից, որին շին հակասում նաև ղուգահեռ նյութերը հարևան երկրներից: Հացավանի հղկված թասերի խումբը թվագրվում է IV—VI դարերով:

Երկարավուն սրվակները կանաչավուն ապակուց են, նրանք մեծ քանակությամբ հանդիպում են Դվինի կենտրոնական թաղամասում, որը վերը քստին հաստատում է նրանց վաղ միջնադարյան լինելը: Ձվաձև տաշված օղակներով միջագետքյան նույնանման սրվակները Պինդեր-Վիլսոնը թվագրում է V—VI դարերով:

Փորագիր ապակիների խմբին են պատկանում նաև քառակող իրանով, հորիզոնական և ուղղահայաց դարձերով, շորս փոքրիկ ոտքերով փոքր սրվակները: Սրանք արդեն փշված են ղարդարուն կաղապարի մեջ: Սրվակների այս տիպը եգիպտական ծագում ունի, VII—IX դդ. լայն տարածում է ստացել Սամառայում: Նույն ժամանակաշրջանով էլ թվագրվում են Դվինի սրվակները:

Նույն խմբի մեջ են մտնում բաղմանիստ սրվակները, որոնք ղուրկ են ղարգանախշերից: Սրվակները շորսից մինչև ութ նիստ ունեն, մեծ մասը դեղնավուն ապակուց է:

4. Մոզաիկ ապակի: Ապակե գույնը գույնը թափաք վիճակում հալված աղաղու մեջ էին գրվում առանձին-առանձին և ապա կաղապարով, ճնշման եղանակով ստանում անոթի ձևերը՝ ուղած

ղարդարումով: Աշխատատար սյուրեցների բարդության հետևանքով այս եղանակով պատրաստված անոթները շատ թանկ են գնահատվել անտիկ շրջանում: Միջնադարյան Հայաստանի հուշարձաններում մոզաիկ ապակե անոթներ բոլորովին չեն հանդիպում: Մի քանի օրինակ հայտնաբերվել է Դվինում, այն էլ, ըստ երևույթին, վաղ միջնադարյան շրջանում ներմուծված են եղել արևելյան որևէ կենտրոնից: Նման ապակիների արտադրությունը հավանաբար սահմանափակ է եղել Սամառայում: Մոզաիկ եղանակով պատրաստված մի քանի կոնաձև իրեր գտնվել են Դվինում, ինչպես նաև կոնաձև մի իր՝ Գառնիում: Նրանք համարվում են ներդիրներ, ըստ իս նաև խաղափուլեր:

Հիշյալ եղանակի ընդօրինակությամբ են պատրաստված նաև Դվինում հայտնաբերված մի քանի անոթներ: Նրանցից մեկը գավաթ է, մյուսները՝ սրվակներ, փետրաձև սպիտակ նախշերով: Վերջիններս Հին Արևելքում տարածված են եղել մ. թ. ա. II հաղարամյակից: Սիրիայում և Նիդիտոսում նրանք հանգիղում են մ. թ. ա. VII—IV դարերում:

VII դարում ապակի լայն կիրառություն է ունեցել նաև ինտելեկտուալ աղվեստում: Եթե վաղ շրջանի խճանկարները պատրաստվել են ղույնըդգույն մանր քարերով (այդ ձևով է պատրաստված Գառնիի III դարով թվագրվող բաղնիքի հոյակապ խճանկարը), ապա VI—VII դարերում մեծ չափերով օգտագործվել են ապակե ղանգվածից (սամառայից) պատրաստված հատիկները, որոնք ներկված են տարբեր գույներով, նույնիսկ պատված ոսկու բարակ շերտով: Դվինի կենտրոնական թաղամասում գտնված ապակե խճանկարի հատիկները պատկանել են կաթողիկե եկեղեցու VII դարի վերակառուցումից հետո պատրաստված խճանկարին:

Դվինի պեղումներից հայտնաբերված ապակե անոթները, շնայած իրենց սակավությանը, թույլ են տալիս խոսել V—VIII դարերում աղաղագործության արհեստի առկայության մասին: Անդրկովկասյան հուշարձաններում հայտնաբերված ապակեղենը հնարավորություն է տալիս նշել որոշ ընդհանրություններ ապակեգործության այդ կենտրոնների և Դվինի արտադրանքի միջև: Դվինի վաղ միջնադարյան ապակի անոթների ձևերի և մշակման առանձնահատկություններով շատ մոտ է կանգնած անտիկ շրջանի ապակեգործությանը և նրա ուղղակի շարունակություն է կաղում:

¹ Խալիֆաթի մայրաքաղաքը IX դարում, Բաղդադի մոտ:

Ա Ղ Յ Ո Ւ Ս Ա Կ Ե Ն Ր Ի Ց Ո Ւ Ց Ա Կ

Աղյուսակ I. Դվինի միջնաբերդի ընդհանուր տեսարանը հարավից: Առաջին պլանում պարիսպների տակ՝ խրամատոր. աջից՝ երկթուղջ կամրջի մնացորդները կենտրոնական խնուր:

Աղյուսակ II. Դվինի միջնաբերդի ընդհանուր տեսարանը. 1965:

Աղյուսակ III. Դվինի միջնաբերդի զազաթում բացված հում աղյուսակ մեծ շենքի ավերակները: VIII—IX դդ.:

Աղյուսակ IV. 1. Դվինի միջնաբերդի ընդհանուր տեսարանը հյուսիս-արևելքից: 2. Դվինի կենտրոնական թաղամասի մոնումենտալ շենքերի վերակազմություն: Նկ. Ա. Պատրիկի:

Աղյուսակ V. Քաղաքի կենտրոնական թաղամասի ընդհանուր տեսարանը միջնաբերդի կողմից:

Աղյուսակ VI. 1. Վերակազմությունը քաղաքի կենտրոնական թաղամասի շենքերի: 2. Բնավոր խաչ՝ գտնված Դվինի կենտրոնական թաղամասում: VI—VII դդ.:

Աղյուսակ VII. Կաթողիկե եկեղեցու հատակածները իրենց կրած փոփոխություններով:

1. Նախնախն հատակած. IV—V դդ.:

2. Հատակածը արտաքին սյունասրահը շինելուց հետո, V դարի 50-ական թվականներ:

3. Եկեղեցու հատակածը VII դարի վերակառուցումից հետո:

4. Կաթողիկե եկեղեցու հատակածի կրած փոփոխությունները վերջին վերակառուցման ժամանակ:

Աղյուսակ VIII. 1. Վերակազմություն կաթողիկոսական պալատի հատակածի: 2. Վերակազմություն միանալ բաղնիկի եկեղեցու հատակածի:

Աղյուսակ IX. Քաղաքի կենտրոնական թաղամասում 1964—1966 թթ. բացված շինությունների արևելյան և հարավային հատվածը բնակելի սյունաղարգ մասով և տնտեսական կառույցներով: Հատակագիծը և կտրվածքը: Չավազրույթները նարտ. Գր. Քոչոյանի:

Աղյուսակ X. 1. Կաթողիկոսական պալատի արձափնաղարգ խոյակ: V դարի 2-րդ կես: 2. Խաղողի այգեկույթի բարձրաբանդակ, գտնված Վերին Արտաշատ դուրդի զբոսայգում: V—VI դդ.:

Աղյուսակ XI. Դվինի կենտրոնական թաղամասը միջնաբերդի հետ կապող մուտքի մոտով անցնող ջրատար խողովակների ճյուղերը: V դարի վերջ:

Աղյուսակ XII. Կենտրոնական թաղամասի ջրատար սիստեմի մի ճյուղը: V դարի վերջ:

Աղյուսակ XIII. Կաթողիկե եկեղեցու կղմինդրներ և ջրատար սիստեմի խողովակներ: V—VII դդ.:

Աղյուսակ XIV. 1. Հատակ կավե սալիկներով, Թումանյան դուրդ, երկ. 42 սմ, լայն. 33 սմ, հաստ. 4 սմ, VI—VII դդ.:

2. Արբայատկեր՝ ծածկի կղմինդրի վրա, Դվին, 2-րդ տեղամաս, 1617/259—38 թ. VII դար:

3. Կիսարուր կղմինդրների օրինակներ ճակտոններով, Դվին, 2-րդ տեղամաս, կաթողիկե եկեղեցի, VII դար:

4. Հարթ կղմինդրների բեկորներ, կարմիր ներկով արված դարզանախշերով: Դվին, 2-րդ տեղամաս: VII դար:

Աղյուսակ XV. 1. Աշտարակ, Կարմրավոր եկեղեցի, սահայանված կղմինդրե ծածկով: VII դար:

2. Քանդակված տարրեր տիպի սափորների երկու՝ Պողոսի եկեղեցու հյուսիսային սյուսի չիլի վրա: VI դար:

Աղյուսակ XVI. 1. Նրկաթե մանղաղի բեկոր: Դվին, միջնաբերդ, Ե—1, 2, 2 մ, 2196/8—61 թ. VI—VIII դդ.:

2. Կիսարուր կղմինդրի ճակտոն մարդու պատկերով: Դվին, 2-րդ տեղամաս, 13Ը, 1,5 մ, 1847/129—47 թ. VII դար:

3. Նրկաթե դաբատ: Դվին, Միջնաբերդ, 0 կետից արձվելը, հնոցներ, 2237/72—62 թ. VI—VII դդ.:

4. Բրոնզե բանալի: Դվին, 2-րդ տեղամաս, կաթողիկե եկեղեցու արևմտյան մուտքի մոտ, 1794/52—46 թ., երկար. 29 սմ: VII դար:

5. Ինքն զուսնի խուփ երկաթից: Դվին, պատահական: VII—IX դդ.:

Գրականություն. Կ. Վաֆադուրյան, Դվին քաղաքը և նրա պիլոնները, Սրեան, 1952: А. А. Калантарян, Материальная культура Двина V—VIII вв., автореферат диссертации, Ереван, 1966.

Աղյուսակ XVII. 1. Նրկաթե դանակ: Դվին, միջնաբերդ, 31 բլիթ, 4,0 մ, 1980/79—54 թ., երկար. 17 սմ: V—VII դդ.:

2. Նույն տիպի՝ առանց պողկեի: Դվին, միջնաբերդ 0 կետից արևելք, հնոցներ, 2237/2—62 թ., երկար. 14,5 սմ: V—VII դդ.:

3. Նույն տիպի՝ ծայրը կոտրված: Դվին, միջնաբերդ:

- նույն տեղից, 2237/3—62 թ., երկար. 13 սմ: V—VII դդ.:
4. Նույն տիպի՝ առանց պոչուկի: Դվին, միջնաբերդ, 2Ե, 1,2 մ, 2237/6—62 թ., երկար. 13,5 սմ: V—VII դդ.:
 5. Դանակ, փոքր, լեզվակը մտցված է բրոնզե խողովակաձև կոթափ մեջ: Դվին, միջնաբերդ, 38 բլրի, հոր, 2046/114—56 թ., երկար. 9 սմ: V—VII դդ.:
 6. Դանակ կեն շեղրով: Դվին, միջնաբերդ, Ե—13/14, 70 սմ, 2158/143—60 թ., երկար. 18 սմ: V—VIII դդ.:
 7. Դանակ կեն շեղրով: Դվին, միջնաբերդ, 21 բլրի, հոր, 1907/171—50 թ., երկար. 19 սմ: VII—IX դդ.:
 8. Երկաթե դանակի բեկուր: Դվին, 2-րդ տեղամաս, 10 բառ., 80 սմ, 1617/129—38 թ., երկար. 7,5 սմ: VII—VIII դդ.:
 9. Երկաթե դանակ: Դվին, միջնաբերդ, Ը—1, 1,0 մ, 2237/91—62 թ., երկար. 15,5 սմ: V—VII դդ.:
 10. Նույն տիպի: Դվին, միջնաբերդ, Ե—1, 2,2 մ, 2196/57—61 թ., երկար. 18 սմ: V—VII դդ.:
- Գրականություն. А. А. Калантарян, Материальная культура Двина V—VIII вв.
- Ջուգաճեռներ. А. М. Беленицкий, Общие результаты раскопок городища древнего Пенджикента (1951—1953), МИА, № 66, 1958; Б. Я. Ставиский, Раскопки квартала жилищ знати юго-восточной части Пенджикентского городища (объект VI), 1951—1959 гг., МИА, № 124; Е. М. Зеймаль, Раскопки объекта XIV на Пенджикентском городище (1956—1957 гг.), МИА, № 124; Р. М. Ваидов, Мингечаур в III—VIII вв. (на азерб. яз.), Баку, 1961.
- Սղյուսակ XVIII. 1. Պղնձե մատանի: Դվին, 2-րդ տեղամաս, Ե—6, 4,2 մ, 1848/80—47 թ.: V—VII դդ.:
- 2. Նույն տիպի: Դվին, 2-րդ տեղամաս, Ե—6, 1,2 մ, 1848/27—47 թ.: V—VII դդ.:
- 3. Պղնձե ականջոյ: Դվին, 2-րդ տեղամաս, 1543/652—37 թ.: V—VII դդ.:
- 4. Նույն տիպի: Նույն տեղից, 1543/616—37 թ.: V—VII դդ.:
- 5. Պղնձե սկավառակներ միացված շղթայով: Դվին, 2-րդ տեղամաս, Ե—6, 1,4 մ, 1848/59—47 թ.: V—VII դդ.:
- 6. Պղնձե ականջոյ: Դվին, 2-րդ տեղամաս, Ե—12, 1,55 մ, 1905/5—48 թ.: V—VII դդ.:
- 7. Արծաթե ականջոյ: Դվին, 2-րդ տեղամաս, 9Ե, 0,7 մ, 1848/81—47 թ.: VI—VII դդ.:
- 8. Պղնձե կախիկ: Դվին, 2-րդ տեղամաս, կաթողիկեի միջից, 1,5 մ, 1913/167—51 թ.: V—VI դդ.:
- 9. Պղնձե ճարմանդների մասեր: Դվին, միջնաբերդ, բակ, 2,0 մ, 2047/23, 74, 75, 76—57 թ.: VIII դար:
- 10. Վարսակալ դարձրոն լեռքավորութայն: Դվին, միջնաբերդ, 24 բլրի, 2,8 մ, 1917/3—52 թ., երկար. 14,7 սմ: V—VII դդ.:
- 11. Նույն տիպի՝ թռչնակերպ դիտով: Դվին, միջնաբերդ, բակ, 0,7 մ, 2047/77—57 թ.: V—VII դդ.:

Գրականություն. Կ. Ղաֆաղաբյան, Դվին քաղաքը...

А. А. Калантарян, Материальная культура Двина V—VIII вв.

Ջուգաճեռներ. В. М. Ваидов, Мингечаур в III—VIII.; О. М. Dallon, Byzantine art and archaeology, Oxford, 1911; Նույնի, East Christian art, A survey of the Monuments, Oxford, 1925:

- Սղյուսակ XIX. 1. Երկաթե պոչուկավոր եռաթև նետասլաք: Դվին, միջնաբերդ, Ը—8, 2,0 մ, 2048/314—58 թ., երկար. 4,5 սմ: V—VII դդ.:
- 2. Նույն տիպի: Դվին, միջնաբերդ, բակ, 2,0 մ, 2048/103—58 թ., երկար. 4,5 սմ: V—VII դդ.:
- 3. Նույն տիպի: Դվին, միջնաբերդ, բակ, 2,0 մ, 2047/49—57 թ., երկար. 4,8 սմ: V—VII դդ.:
- 4. Նույն տիպի: Դվին, 2-րդ տեղամաս, 12 բառ., 2,0 մ, 1617/16—38 թ., երկար. 6 սմ: V—VII դդ.:
- 5. Նույն տիպի՝ լայն թևերով: Դվին, միջնաբերդ, 0 կենտրոնից, հետքեր, 2237/8—62 թ., երկար. 6.8 սմ: V—VII դդ.:
- 6. Նույն տիպի՝ երկար պոչուկով: Դվին, 2-րդ տեղամաս, 18Գ, 1,5 մ, 1617/304—38 թ., երկար. 8,5 սմ: V—VII դդ.:
- 7. Երկաթե պոչուկավոր նետասլաք շեղանկյուն հատվածքով: Դվին, միջնաբերդ, Ը—6, 1,5 մ, 1913/155—51 թ., երկար. 5,8 սմ: V—VII դդ.:
- 8. Նույն տիպի, պոչուկը կոտրված է: Դվին, միջնաբերդ, բակ, 2,0 մ, 2047/48—57 թ., երկար. 4,5 սմ: V—VII դդ.:
- 9. Նույն տիպի: Դվին, միջնաբերդ, բակ, 1,3 մ, 2048/3—58 թ., երկար. 6 սմ: V—VII դդ.:
- 10. Նույն տիպի: Դվին, միջնաբերդ, 2Ե, 1,5 մ, 2237/57—62 թ., երկար. 5,8 սմ: V—VII դդ.:
- 11. Երկուսուցիկ նետասլաք երկար պոչուկով և կոտր խնձորակով: Դվին, 2-րդ տեղամաս, Ը—5ա, 1794/84—46 թ., երկար. 9,3 սմ: V—IX դդ.:
- 12. Նետասլաք ոտմարձև հատվածքով: Դվին, միջնաբերդ, մեհյան, 4,0 մ, 2237/71—62 թ., երկար. 9,5 սմ: V—VII դդ.:
- 13. Ծանկավոր նետասլաք: Դվին, միջնաբերդ, Բ. սենյակ, 80 սմ, 1905/93—48 թ.: V—VII դդ.:

Գրականություն. Կ. Ղաֆաղաբյան, Դվին քաղաքը...
 Վ. Աբրահամյան, Արհեստները Հայաստանում IV—XVIII դդ., Երևան, 1956, նույնի, Միջնադարյան Հայաստանի դենքի տեսակները, ՀՊՊԲ «Աշխատություններ», հ. II, 1949, Բ. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դդ., հ. I, 1958, Ա. Ա. Քալանտարյան, Զենքերը V—VIII դդ., ՊՐԶ, 1965, № 4(31), А. А. Калантарян, Материальная культура Двина V—VIII вв.

Ջուգաճեռներ. Л. А. Чилашвили, Городище Урбнис (на гр. яз.), Тбилиси, 1964; его же, Некоторые моменты археологического исследования Урбнис, Вестник Гос. музея Грузии, том XXIV-B, Тбилиси, 1963; Р. М. Ваидов, Мингечаур в III—VIII вв.; А. М. Беленицкий, Раскопки здания № 1 на шахристане Пенджикента (1947), МИА, № 15, 1950; его же, Общие результаты...; А. И.

Тереножкин, Археологическая разведка на городище Афраснаб в 1945 г.; КСИИМК, вып. XVII, 1947; Б. А. Литвинский, Среднеазиатские железные наконечники стрел, СА, 1965, № 2; Е. В. Зеймал, Раскопки объекта XIV...; R. Ghirshman, Bégram, Recherches archéologiques et historiques sur les Kouchans, MDAFA, II, Calre, 1946.

- Աղյուսակ XX. 1. Երկաթե նիզակի ռեկոր սնամեջ կոթառով: Դվին, միջնաբերդ, —a—13 հոր, № 1, 2048/378—58 թ., պահպանված մասի երկար. 10,4 սմ, V—VIII դդ.:
2. Երկաթե նիզակ: Դվին, միջնաբերդ, —h—9/10, հոր, 2158/197—60 թ., երկար. 19,4 սմ, V—VIII դդ.:
3. Երկաթե նիզակ, ռոլորատեղ: Դվին, 2-րդ տեղամաս, 23 քառ., 1,2 մ, 1617/65—38 թ., երկար. 14 սմ, VI—VII դդ.:
4. Երկաթե նիզակի ռեկոր: Դվին, միջնաբերդ, 31 բլիշ, 2,4 մ, 1980/80—54 թ., երկար. 15 սմ, V—VIII դդ.:

Գրականություն. Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը..., Բ. Ա. Նախյան, Քաղաքները և արհեստները..., Ա. Քալանթարյան, Ձեռքբերը V—VIII դդ., Կույնի, Материальная культура Двина V—VIII вв.

- Աղյուսակ XXI. 1. Երկաթե թերթիկավոր զրահի ռեկորներ: Դվին, միջնաբերդ, —c—15, հոր № 2, 2121/235—59 թ., թերթիկի երկար. 8 սմ, լայն. 3,5—4 սմ, VIII—IX դդ.:
2. Զրահի ռեկորներ: Դվին, միջնաբերդ, 31, հոր, 2237/21—62 թ., երկար. 5,5 սմ, լայն. 1,5 սմ, VII—VIII դդ.:
3. Զրահի ռեկորներ: Դվին, 2-րդ տեղամաս, 1543/471—37 թ., երկար. 7,5, լայն. 1,5 սմ, VI—VII դդ.:

Գրականություն. Ա. Ա. Քալանթարյան, Պաշտպանական սպառազինությունը վաղ միջնադարյան Հայաստանում, «Տեղեկագիր» ՀՄՄՀ ԳԱ, հաս. գիտ., 1965, № 10, Կույնի, Материальная культура Двина V—VIII вв

Զուգամեմեք. А. М. Беленицкий, Раскопки здания № I...

Աղյուսակ XXII. Արծաթե զարդեր, ոսկերչի հալոց և գզալիկներ: Դվին, կենտրոնական թաղամաս: VI—VII դդ.: Տե՛ս աղյուսակ XXIV, № 2:

Աղյուսակ XXIII. Սասանյան արծաթե իրերի գանձ, գտնված Նոր Բայազետում (Կամո): Ուշ սասանյան շրջանի:

Գրականություն. Я. И. Смирнов, Восточное серебро, СПб, 1909; К. В. Тревер, К вопросу о так называемых сасанидских памятниках, СА, XVI; А. Я. Борисов и В. Г. Луконин, Сасанидские геммы, Л., 1963; С. А. Есаян, О чаше из Нор-Баязетского клада, ИАН Арм. ССР, общ. науки, 1964, № 9; Joseph Orbell, Sasanian and early islamic metalwork SPA, vol. IV; R. Gobl, Die Münzen der Sasaniden, S. Gravenhage, 1962:

Աղյուսակ XXIV. 1. Գողիաթի քանդակը դրահահարուստով, Ախթամար, X դար:

2. Արծաթե զարդերի դանձ: Դվին, 2-րդ տեղամաս: VII դար: Տե՛ս աղյուսակ XXI:

3—5. Մարդկանց քանդակներ շինարարական և գյուղատնտեսական տարբեր գործիքներ ձեռքերին, Զվարթնոց, VII դար:

6. Ոսկե խաչ, Դվին, VII դար:

7. Երկաթե ուրաղ, Գաննի, 1956 թ., VII—VIII դդ.:

Աղյուսակ XXV. 1. Կարաս, կարմրավուն, լավ թրծված կավից: Հատակը ելուստած է, իր վրա կրում է եղևնաձև զարդ, Դվին, 2-րդ տեղամաս, բարձր. 12 մ, բերանի տրամ. 52 սմ, V—VII դդ.: Նման կարասների երկու օրինակ պահպանվում է Դվինի հնագիտական բազայում: Մեկը գտնվել է 2-րդ տեղամասում, մյուսը՝ 1-ին տեղամասում, 1963 թ.:

Կարասները ավելի արխաիկ են, կրում են շեղ փորագիր զարդագոտի:

2. Կարաս, կարմրավուն, հարթ հատակով և ուղիղ կարված բերանով: Արմավիր, բարձր. 1,3 մ, հատակի տրամ. 23 սմ, բերանի բացվածքը 48 սմ: IV—V դդ.:

3. Կարաս, կարմրավուն կավից, հարթ հատակով: Զվարթնոց, բարձր. 1,10 մ, բերանի տրամ. 37 սմ, հատակի տրամ. 25 սմ: VII դար: Տե՛ս աղյուսակ XXXVI, 1:

4. Կարաս, դեղնավուն կավից, 4 կանթանի, ունի 4 կեղծ կանթ: Դվին, միջնաբերդ, բարձր. 72 սմ, հատակի տրամ. 21 սմ, բերանի տրամ. 36 սմ: VII—IX դդ.:

5. Կարաս, դեղնավուն կավից, թերի, ունի վերագիր ալիքաձև զարդեր: Դվին, 2-րդ տեղամաս, պահպանված մասի բարձր. 1,1 մ, հատակի տրամ. 20 սմ, VII դար:

6—7. Կարաս դեղնավուն կավից, ուռուցիկ, ոլոր զարդերով, 2 հատ: Դվին, միջնաբերդ, № 6-ի բարձր. 74 սմ, հատակի տրամ. 16 սմ, բերանի տրամ. 29 սմ, № 7-ի բարձր. 65 սմ, հատակի տրամ. 19 սմ, բերանի տրամ. 29 սմ: VII դար:

8. Կարաս, դեղնավուն կավից, երկկանթանի: Դվին, միջնաբերդ, բարձր. 57 սմ, հատակի տրամ. 18 սմ, բերանի տրամ. 27 սմ: VII—IX դդ.:

9. Կարաս դեղնավուն կավից, 4 կանթանի: Դվին, միջնաբերդ բարձր. 65 սմ, հատակի տրամ. 18 սմ, բերանի տրամ. 29 սմ: VII—IX դդ.:

10. Կուժ, ձևավոր շուրթով, կարմիր փայլեցրած գոտիով: Դվին, միջնաբերդ, 30 բլիշ, 1,5 մ, 1917/127—52 թ., բարձր. 31 սմ, հատակի տրամ. 12 սմ, բերանի տրամ. 12 սմ, VII—VIII դդ.: Տե՛ս աղյուսակ XXXVI, 2:

Գրականություն. Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը..., А. А. Калантарян, Материальная культура Двина V—VIII вв.

Զուգամեմեք. Б. Н. Аракелян, Гарни, I, 1952; Գ. Տիրացյան, Հացավան ամրոցի 1962 թ. պեղումները, «Տեղեկագիր» ՀՄՄՀ ԳԱ, հաս. գիտ., 1963, № 12, Գ. Կ. Կ. Կ. Կ., О гончарных обжигательных печах из

Мингечаура. МКА II, 1951; *И. Б. Бектович*, Керамика верхнего слоя Пенджикента (VII—VIII вв.), МИА, № 124

- Աղյուսակ XXVI. 1. Կճուճ, ուռուցիկ իրանով, ակնաշավոր կանթերով: Դվին, 2-րդ տեղամաս, Ը—19, 1, 85 մ, 2305/82—64 թ., բարձր 22,5 սմ, հատակի տրամ. 12,5 սմ, բերանի տրամ. 20 սմ: VIII—IX դդ.:
2. Նույն տիպի: Նույն տեղից, 2305/83—64 թ., բարձր. 20 սմ, հատակի տրամ. 12 սմ, բերանի տրամ. 17 սմ: VIII—IX դդ.:
3. Կճուճ, ուռուցիկ իրանով, կլոր կանթերով: Դվին, 6-րդ տեղամաս, 4ի, 1,55 մ, 1917/59—52 թ., բարձր. 17 սմ, հատակի տրամ. 11,5 սմ, բերանի տրամ. 20 սմ: VIII—IX դդ.:
4. Կճուճ, ուռուցիկ իրանով, ալիքաձև և ելուստավոր կանթերով: Դվին, 2-րդ տեղամաս, Վ18, 5,0 մ, 1847/93—47 թ., բարձր. 18 սմ, հատակի տրամ. 13,5 սմ, բերանի տրամ. 17 սմ: VII—VIII դդ.:
5. Կաթնաման ղեղնավուն կավից, խողովակաձև ձորակով: Դվին, միջնաբերդ, բակ, 2,4 մ, 2047/27—57 թ., բարձր. 19 սմ, հատակի տրամ. 15 սմ, բերանի տրամ. 26 սմ: VII—VIII դդ.:
6. Կաթնաման, կարմիր փայլեցրած, մի կողմում ձորակ: Դվին, միջնաբերդ, —ի—12, 2,0 մ, 2121/59—59 թ., բարձր. 7,5 սմ, հատակի տրամ. 5 սմ, բերանի բացվածքը՝ 13 սմ: VII—VIII դդ.:
7. Տաշտի բեկոր, կարմիր փայլեցրած և հարուստ զարդամոտիվներով: Գառնի, 1-ին տեղամաս, 20ա, 0,6 մ, 1964/277—50 թ., 10×11,5: V—VII դդ.:
8. Նույն տիպի: Գառնի, 1-ին տեղամաս, 16Մ, 2,5 մ, 1964/320—50 թ., 10,5×13: V—VII դդ.:
9. Կաթնաման, քիչ բարձր ձորակով: Դվին, միջնաբերդ, 4Ը, 1794/289—46 թ., բարձր. 12 սմ, հատակի տրամ. 13 սմ, բերանի բացվածքը՝ 28 սմ: VI—VIII դդ.: Տե՛ս աղյուսակ XXXVI, 5:
10. Կաթնաման ելուստաձև կանթով և ձորակով: Դվին, 2-րդ տեղամաս, —4Մ, 1,05 մ, 1907/82—50 թ., բարձր. 11 սմ, հատակի տրամ. 9 սմ, բերանի տրամ. 24 սմ: VII—VIII դդ.:
11. Կաթնաման, ձորակով և կլոր հատակով: Դվին, միջնաբերդ, 9Ը, հոր, 1794/399—46 թ., բարձր. 10,5 սմ, բերանի տրամ. 15 սմ: VII—VIII դդ.: Տե՛ս աղ. XXXVI, 6:

Գրականություն. Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը...

Ա. Ա. Կալանտարյան, Материальная культура Двина V—VIII вв.

Զուգահեռներ. *И. Гзелишвили* и *О. Ткешелашвили*, Памятники материальной культуры г. Тбилиси (на гр. яз.), Тбилиси, 1961; *Л. А. Чилашвили*, Городище Урбнисы; *Р. Б. Геюшев*, Отдельные этапы развития гончарных изделий в Кабале в I—X вв. (на азерб. яз.), ДАН Аз. ССР, 1963, XIX; № 12.

Աղյուսակ XXVII. Կավե թասերի բեկորների կաթողիկեի և միտնավ բազիլիկ եկեղեցու հիմքերի տակից: V—VI դդ.:

- Աղյուսակ XXVIII. 1. Պնակ, կարմրաներկ, փորագիր զարդազտիով և օղակաձև նստուկով: Գառնի, 3-րդ տեղամաս, 8Ե, 1,3 մ, 2099/76—57 թ., բարձր. 9,5 սմ, հատակի տրամ. 6,4 սմ, բերանի տրամ. 17 սմ: V—VII դդ.:
2. Նույն տիպի առանց զարդազտիի: Գառնի, 1-ին տեղամաս, 17ա, 1,6 մ, 2099/9—57 թ., բարձր. 8 սմ, հատակի տրամ. 5,5 սմ, բերանի տրամ. 17 սմ: V—VII դդ.:
3. Նույն տիպի, զարդանախշովից զուրկ, մրապատ: Գառնի, 3-րդ տեղամաս, 10Ը, 40 սմ, 2144/16—59 թ., բարձր. 6 սմ, հատակի տրամ. 5,4 սմ, բերանի տրամ. 12 սմ: V—VII դդ.:
4. Պնակ, կարմիր փայլեցրած, ներքին մակերեսը փայլի միջոցով արված դժեր են, Դվին, միջնաբերդ, —ի—17, 1,2 մ, 2305/62—64 թ., բարձր. 12 սմ, հատակի տրամ. 26,7 սմ: V—VII դդ.:
5. Պնակ, կարմրավուն կավից, հարթ հատակով: Գառնի, 3-րդ տեղամաս, տաճարի մոտ, 20 սմ, 1966/147—52 թ., բարձր. 4,5 սմ, հատակի տրամ. 5,5 սմ, բերանի տրամ. 11 սմ: V—VII դդ.:
6. Խորը պնակ, ղեղնավուն կավից, հաստապատ: Դվին, միջնաբերդ, —Ե— 13/14, 1,7 մ, 2158/213—60 թ., բարձր. 6 սմ, հատակի տրամ. 7 սմ, բերանի տրամ. 30 սմ: VII—VIII դդ.:
7. Նույն տիպի օղակաձև նստուկով: Դվին, միջնաբերդ, 14 փոս, հոր, 1907/77—50 թ., բարձր. 10 սմ, հատակի տրամ. 11 սմ, բերանի տրամ. 23 սմ: VII—VIII դդ.:
8. Նույն տիպի հատակը տափակ: Դվին, 2-րդ տեղամաս, Ե—19, 2,0 մ, 2305/64—64 թ., բարձր. 10 սմ, հատակի տրամ. 10 սմ, բերանի տրամ. 26 սմ: VII—VIII դդ.:
9. Պնակ, ղեղնավուն դույնի օղակաձև նստուկով: Դվին, 6-րդ տեղամաս, 1Կ, 2,5 մ, 1917/171—52 թ., բարձր. 12 սմ, հատակի տրամ. 9 սմ, բերանի տրամ. 20 սմ, VII—VIII դդ.:

Գրականություն. Ա. Ա. Կալանտարյան, Материальная культура Двина V—VIII вв.

Աղյուսակ XXIX. 1. Փոքրագիր կճուճ, վզի տակով անցնում է ուռուցիկ դոսի: Դվին, միջնաբերդ, 2Ե, 2,0 մ, 2243/253—62 թ., բարձր. 11,8 սմ, հատակի տրամ. 6,5 սմ, բերանի տրամ. 6,5 սմ: V—VII դդ.: Տե՛ս աղ. XXXVII, 4:

3. Փոքրագիր կճուճ՝ կարմրավուն կավից, փորագիր զարդերով: Դվին, 2-րդ տեղամաս, 8Ի, 2,6 մ, 1617/96—38 թ., բարձր 13 սմ, հատակի տրամ. 8 սմ, բերանի տրամ. 9 սմ: V—VII դդ.: Տե՛ս աղ. XXXVII, 8:

3. Փոքրագիր կճուճ, ձեռքով պատրաստած, մրապատ: Դվին, միջնաբերդ, 1Ը, 1,0 մ, 2243/225—62 թ., բարձր. 8,4 սմ, հատակի տրամ. 5 սմ, բերանի տրամ. 6,6 սմ: V—VII դդ.: Տե՛ս աղ. XXXVII, 3:

